ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28 –Ի ՆԻՍՏՈՒՄ
ԸՆԴՈՒՆՎԱԾ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 11-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 28-ի նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը***.

1.1. Ջերմուկի համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի առաջին եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.2. Ջերմուկի համայնքի 2015 թվականի ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը, Ջերմուկի համայնքապետարանի և նրա ենթակա կառույցների ֆինանսական գործունեության հետ կապված 2015 թվականի հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Ա. Ղազարյան

1.3. Ջերմուկի համայնքի ավագանու 2008 թվականի նոյեմբերի 4-ի N 41-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.4. Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի NN 25-Ն, 26-Ն և 27-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին.

զեկ. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.5. «Ջերմուկի քաղաքային համայնքի Կ.Ա.Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին.

զեկ. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.6. «Ջերմուկի քաղաքային համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին.

զեկ. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.7. «Ջերմուկ քաղաքի N 1 մանկական արվեստի դպրոց» և «Ջերմուկ քաղաքի N 2 մանկական արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները անվանափոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունները հաստատելու մասին.

զեկ. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.8. «Ջերմուկ քաղաքային համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկը անվանափոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին.

զեկ. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.9. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին .

զեկ. Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.10. Ջերմուկի համայնքի ղեկավարի 2016 թվականի ապրիլի 25-ի N 43-Ա որոշումը և «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.11. «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար Ջերմուկի համայնքի ղեկավարի ներկայացրած թեկնածուին համաձայնություն տալու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

1.12.Ջերմուկի համայնքի Մյասնիկյան փողոցի երթևեկության վերակազմակերպման մասին.

զեկ.համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.13. Ջերմուկի համայնքի սեփականությունը համարվող հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.14.Ջերմուկի համայնքի սեփականությունը համարվող հողամասերի գործառնական նշանակությունները փոխելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.15. Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող հողամասը օտարելու համաձայնություն տալու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.16. Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շահումյան փողոցի N 9/5 հասցեում գտնվող արհեստական լճակը մրցույթով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, տարեկան վարձավճարի գինը և պայմանները հաստատելու մասին

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.17. Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շլաքահանքի փողոցի վրա գտնվող հողամասերը առանց մրցույթի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու համաձայնություն տալու, ամսեկան վարձավճարի չափը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.18. Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շահումյան փողոցի 19-րդ շենքի N 18/1 և 27-րդ շենքի N 9/1 բնակարանները անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին.

զեկ. համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 12-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 -րդ հոդվածի 4-րդ կետին, 69-րդ հոդվածի 1-ին պարբերության, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ընդունել ի գիտություն Ջերմուկի համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի առաջին եռամսյակի տեղական բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-....0..... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2016թ. ապրիլի 28 -ի N 12 -Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի
Ջերմուկի համայնքի
2016 թվականի
առաջին եռամսյակի բյուջեի կատարողականը

ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ 31.03.2016թ.

N		Եկամուտների անվանումը	Տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան (3 ամիս)			
			պլան	պլան	Փաստ	կատար. %	կատար. %
ԽՄԲԸ	ենթախումբը		հազ.դրամ			3 ամիսների նկատմամբ	տարեկան պլանի նկատ.
I		Վարչական բյուջե ընդամենը	238342.0	36265.0	36314.4	100.1	15.2
1		*Ընդամենը հարկային եկամուտներ*	*47068.0*	*7428.0*	*8797.1*	118.4	18.7
	1.1	Հողի հարկ	9081.0	1598.0	2385.9	149.3	26.3
	1.2	Գույքահարկ	37987.0	5830.0	6411.2	110.0	16.9
	1.6	Հողի հարկի և գույքահարկի տույժ և տուգանք					
2		*Ընդամենը տեղական տուրքեր (թույլտվության համար)*	*10508.1*	*1925.0*	*2058.7*	106.9	19.6
	2.1	Նոր կառուցվող օբյեկտների շինարարություն	3.0	0.0	50.0	0.0	1666.7
	2.2	Օբյեկտները վերակառուցելու, տեսքը փոփ. աշխատանքներ	110.0	27.0	0.0	0.0	0.0
	2.3	Օբյեկտները քանդելու աշխատանքներ	0.0	0.0	0.0	0.0	0.0
	2.4	Ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառք	3433.5	570.0	472.0	82.8	13.7
	ա	հիմնական շինությունների ներսում	3433.5	570.0	472.0	82.8	13.7
	բ	ոչ հիմնական շինությունների ներսում					
	2.5	Բացօթյա վաճառք կազմակերպելու	836.0	81.0	15.0	18.5	1.8
	ա	Գազ և վառելիքաքսայուղային նյութեր	325.0	81.0	15.0	18.5	4.6
	բ	գյուղմթերքներ, յուրաքանչյուր օրվա համար					
	գ	այլ ապրանքներ (այդ թվում՝ ոգելից խմիչքներ և (կամ) ծխախոտի արտադրանք)	511.0	0.0	0.0	0.0	0.0
	2.6	ժամը 24.00 ից հետո աշխատելու	500.0	123.0	200.0	162.6	40.0
	ա	խաղատներ					
	բ	շահումներով խաղերի կազմակերպման օբյեկտներ					
	գ	բաղնիքներ (սաունաներ)					
	դ	հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներ	500.0	123.0	200.0	162.6	40.0
	2.7	Արտաքին գովազդ տեղադրելու	2590.6	645.0	686.7	106.5	26.5
	ա	ծխախոտի արտադրանք գովազդող					
	բ	այլ արտաքին գովազդ	2590.6	645.0	686.7	106.5	26.5
	2.8	Օրենքով սահմանված այլ տեղական տուրքեր	3035.0	479.0	*635.0*	132.6	20.9
3		*ՀՀ օրենսդրությամբ սահմանված պետական տուրք*	*500.0*	*123.0*	*54.0*	43.9	10.8
4		*Ոչ հարկային եկամուտներ*	*102108.1*	*6776.5*	*7738.5*	114.2	7.6
	4.1	Համայնքի սեփ.համարվող հողերի վարձակալության վարձավճար.	1851.7	362.0	876.6	242.2	47.3
	4.2	Գյուղատնտեսական հողերի վարձակալության վարձավճարներ					
	4.3	Տեղական ինքնակառավարման մարմինների գույքի վարձակալութ.	5146.3	856.0	738.0	86.2	14.3
	4.4	Վարչական իրավախախտումների պատժամիջոցներից					
	4.5	Տեղական վճարներ	700.0	116.0	120.0	103.4	17.1
	4.6	Պետական բյուջեից պատվիրակված լիազորությունների համար հատկացումներ	14586.9	3645.0	2929.2	80.4	20.1
	4.7	Այլ ոչ հարկային եկամուտներ	79823.2	1797.5	3074.7	171.1	3.9
5		*Պաշտոնական տրանսֆերտներ՝ հատկացումներ*	*77522.3*	*19377.0*	*17030.6*	87.9	22.0
	5.1	Պետական բյուջեից դոտացիա	68122.3	17028.0	17030.6	100.0	25.0
	5.2	Այլ աղբյուրներից դոտացիաներ	9400.0	2349.0	0.0	0.0	0.0
	5.3	Պ/Բ տրամադրվող նպատակային սուբվենցիա	0.0	0.0	0.0	0.0	0.0
		Տարեսկզբի ազատ մնացորդ	*635.5*	*635.5*	*635.5*	100.0	100.0
II		Ֆոնդային բյուջե	5000.0	116.9	179.0	153.1	3.6
	1.1	այլ աղբյուրներից կապիտալ տրանսֆերտ					
	1.2	Համայնքի սեփականությունը համարվող գույքի օտարումից	4999.1	116.0	178.1	153.5	3.6
	1.3	Վարչական բյուջեից (պահուստային ֆոնդից) կատարվող հատկացումներ					
		Տարեսկզբի ազատ մնացորդ	*0.9*	*0.9*	*0.9*	100.0	100.0
		Ընդամենը եկամուտներ /I+II/	*243342.0*	*36381.9*	*36493.4*	*100.3*	*15.0*

ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

N		Ծախսերի անվանումը	Տարեկան բյուջե	Հաշվետու ժամանակաշրջան 3 ամիս)			
			պլան	պլան	Փաստ		
ԽՄԲԻՄԸ	ԵԿԱԽԻՄՆԵՐԸ		հազ.դրամ			ժամանակաշրջանի նկատմամբ %	տարեսկզբի նկատմամբ %
I		*Վարչական բյուջե ընդամենը*	*238342.0*	*36265.0*	*36212.8*	*99.9*	*15.2*
1		Տեղական ինքնակառավարում	48380.4	8730.0	8726.1	*100.0*	*18.0*
2		Պետ. Բյուջ.ՏԻՄ պատվիրակված լիազոր.	16488.4	3115.0	3114.9	*100.0*	*18.9*
3		Կրթություն և գիտություն	28224.3	3020.0	3020.0	*100.0*	*10.7*
4		Առողջապահություն					
5		Սոցիալական ապահովություն և ապահովագրություն					
6		Մշակույթ, սպորտ և կրոն	84745.5	10980.0	10975.8	*100.0*	*13.0*
7		Բնակկոմունալ տնտեսություն	58353.4	9900.0	9861.0	*99.6*	*16.9*
	7.1	Ճանապարհների վերանորոգում	2000.0	0.0	0.0	0.0	0.0
	7.2	Սան մաքրում	52119.7	9900.0	9861.0	99.6	18.9
	7.3	Կանաչապատում					
	7.4	Արտաքին լուսավորություն	4233.7	0.0	0.0	0.0	0.0
	7.5	Հարազատներ չունեցող մարդկանց թաղում					
	7.6	Ջրային կառույցների շահագործում					
	7.7	Այլ ծախսեր					
8		Վառելիքաէներգետիկ համակարգ					
9		Գյուղատնտեսություն	*33.0*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.0*
10		Անտառային, ջրային տնտեսություն և ձկնաբուծություն					
11		Լեռնահանքային արդյունաբերություն և հանքային հանածոներ					
12		Պահուստային ֆոնդ					
13		Այլ ծախսեր	0.0	0.0	0.0	*0.0*	*0.0*
II		Ֆոնդային բյուջե	2117.0	520.0	515.0	*99.0*	*24.3*
1		Կապիտալ շինարարություն	5000.0	116.9	174.0	*148.8*	*3.5*
2		Կապիտալ վերանորոգում	400.0	0.0	0.0	0.0	0.0
3		գեոդեզիական -քարտեզագրական ծախսեր	1000.0	0.0	0.0	0.0	0.0
4		Պահուստների ձևավորում	1000.0	0.0	0.0	0.0	0.0
			2600.0	116.9	174.0	148.8	6.7
		Ընդամենը ծախսեր՝	*243342.0*	*36381.9*	*36386.8*	*100.0*	*15.0*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 13-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ , ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՆՐԱ ԵՆԹԱԿԱ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌՆԵՐԸ, ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետին և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2015 թվականի ապրիլի 1-ի «Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008 թվականի փետրվարի 4-ի N 80-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» 176-Ն որոշման համաձայն ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի 2015 թվականի ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը համաձայն հավելված 1-ի:

2.Հաստատել Ջերմուկի համայնքապետարանի և նրա ենթակա կառույցների 2015 թվականի ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները և գույքագրման փաստաթղթերը համաձայն հետևյալ հավելվածների՝

ա/ Հավելված N 2 (ձև 1-7)՝ Ջերմուկի համայնքապետարան

բ/ Հավելված N 3 (ձև 1-7)՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության Ջերմուկի տարածքային բաժին

գ/Հավելված N 4 (ձև 1-7)՝ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժին

դ/ Հավելված N 5 (ձև 1-7)՝«Ջերմուկի համայնքի «Զատիկ մանկապարտեզ» ՆՈՒՀ» ՀՈԱԿ

ե/ Հավելված N 6 (ձև 1-7)՝ «Ջերմուկի համայնքի N 1 մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ

զ/ Հավելված N 7 (ձև 1-7)՝ «Ջերմուկի համայնքի N 2 մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ

է/ Հավելված N 8 (ձև 1-7)՝ «Ջերմուկի համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» ՀՈԱԿ

ը/ Հավելված N 9 (ձև 1-7)՝ «Ջերմուկի երիտասարդական կենտրոն» ՀՈԱԿ

թ/ Հավելված N 10 (ձև 1-7)՝ «Ջերմուկի համայնքի ճոպանուղի» ՀՀ

ժ/Հավելված N 11 (ձև 1-7)՝ «Ջերմուկի համայնքի քաղաքային գրադարան» ՀՀ

ի/ Հավելված N 12 (ձև 1-7)՝ «Ջերմուկի համայնքի մանկապատանեկան մարզադպրոց » ՀՀ

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ-.....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- .....0.....

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված 1
Ջերմուկ համայնքի ավագանու
2016 թվականի ապրիլի 28-ի N 13 -Ա որոշման

Հաստատված է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 12.12.2001թ. թիվ 465 հրամանով տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) հաշվետվության ներկայացման համար

Տարածվում է ՀՀ կառավարության 26.11.1998թ. N 740 որոշմամբ սահմանված կազմակերպությունների վրա

Ձև N 1

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

առ **31.12.2015թ.**
(ամսաթիվ, ամիս, տարի)

		ծածկագիրը
Կազմակերպության անվանումը	*Ջերմուկի համայնք*	
Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները		
Պետական ռեգիստրում գրանցման համարը		
Հարկ վճարողի հաշվառման համարը		
Չափի միավորը		Հազար դրամ
Գտնվելու վայրը	Ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 — հեռախոսը	028721202
Փաստացի գործունեության իրականացման վայրը	Ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 — հեռախոսը	028721202 010207077

ԱԿՏԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
I. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	010	1839115.6	727531.0
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ	020	0.0	0.0
Ոչ նյութական ակտիվներ	030	0.0	0.0
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ	040	0.0	0.0
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	050	0.0	0.0
Հետաձգված հարկային ակտիվներ	060	0.0	0.0
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	070	0.0	0.0
	071	0.0	0.0
	072	0.0	0.0
	073	0.0	0.0
	074	0.0	0.0
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	080	1839115.6	727531.0
II. Ընթացիկ ակտիվներ			
Նյութեր	090	9557.4	1570.3
Աճեցվող և բտվող կենդանիներ	100	0.0	0.0
Ավարտամաշ առարկաներ	110	33774.7	41653.4
Անավարտ արտադրություն	120	0.0	0.0
Արտադրանք	130	0.0	0.0
Ապրանքներ	140	0.0	0.0
Տրված ընթացիկ կանխավճարներ ԱԱՀ	150	6291.3	6291.3
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	160	4655.5	6376.6
Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով	170	0.0	0.0
Այլ դեբիտորական պարտքեր	180	0.0	100.0
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	190	10.2	249.9
Դրամական միջոցներ `տարեսկզբի ազատ մնացորդ	200	0.0	0.0
Այլ ընթացիկ ակտիվներ, այդ թվում՝	210	0.0	0.0
	211	0.0	0.0
	212	0.0	0.0
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	220	54289.1	56241.5
ՀԱՇՎԵԿՇԻՌ	230	1893404.7	783772.5

ՊԱՍԻՎ	տող	Նախորդ տարվա վերջին	Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին
1	2	3	4
III. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	240	2912538.6	2075711.8
Էմիսիոն եկամուտ՝ ԱԱՀ	250	0.0	0.0
Վերագնահատումից և վերաչափումից տարբերություններ	260	0.0	6488.2
Կուտակված շահույթ	270	(15865.5)	(26749.8)
Պահուստային կապիտալ	280	(1073423.0)	(1348180.8)
Սեփական կապիտալի այլ տարրեր, այդ թվում՝	290	0.0	0.0
	291	0.0	0.0
Ընդամենը սեփական կապիտալ	300	1823250.1	707269.4
IV. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	310	0.0	0.0
Հետաձգված հարկային պարտավորություններ	320	0.0	0.0
Ակտիվներին վերաբերող շնորհներ	330	0.0	0.0
Ոչ ընթացիկ պահուստներ	340	0.0	0.0
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	350	0.0	0.0
	351	0.0	0.0
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	360	0.0	0.0
V. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ բանկային վարկեր	370	0.0	0.0
Կարճաժամկետ փոխառություններ	380	0.0	0.0
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	390	2067.8	2695.8
Ստացված ընթացիկ կանխավճարներ	400	0.0	0.0
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	410	4675.3	5465.1
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական	420	0.0	202.0
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի և աշխատակիցների այլ	430	5948.1	165.4
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր մասնակիցներին	440	0.0	0.0
Այլ կրեդիտորական պարտքեր	450	20970.8	26321.4
Եկամուտներին վերաբերող շնորհներ	460	0.0	0.0
Ընթացիկ պահուստներ	470	33774.7	41653.4
Այլ ընթացիկ պարտավորություններ, այդ թվում՝	480	2717.9	0.0
	481	0.0	0.0
	482	0.0	0.0
	483	0.0	0.0
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	490	70154.6	76503.1
ՀԱՇՎԵԿՇԻՌ	500	1893404.7	783772.5

Համայնքի Ղեկավար — Հովհաննիսյան Վարդան
անուն ազգանուն

Ֆինանսական բաժնի պետ — Ղազարյան Արմինե
անուն ազգանուն

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՑՆՔԻ ԱՍՓՈՓ ԴԵԲԻՏՈՐ-ԿՐԵԴԻՏՈՐՆԵՐԸ,

01.01.2016 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

հ/հ	անվանումներ	բաղարքարդեբարան	հոկտեմբերի	դրությամբ	մնացորդներ	ընթացիկ տարվա դրությամբ	արվեստի հ. 1 Դպրոց	արվեստի հ. 2 Դպրոց	ՋԵԳԻ ՀՈՒՄ	ՔՊԱԳ	ՍՈՏՖ	ՋԱՏԻԿ,ՆՈՒՀ	վարչարարության հ. 51 ցուցակ	ԸՆԴԱՄԵՆԸ
1	ՀՀԿԱՀՊ ՏՀՏ	1236692	527954	239,971.00	84687	2742	1,518,585.00	871945	-111,233.00	65,522.00		1,230,210.00		5667075
2	,,Հայաստանի գանեցը,,ՓԲԸ	9204457	8241309	29662	2415		29,024	9158		(1,515)	-24400	35,130		17525240.1
3	,,Արմենթել,,ՓԲԸ	18111	54398	-1800			(16)	4500	9,290.33		-17700	(3,105)		63678.56
4	,,Գազպրոմ Արմենիա,,ՓԲԸ	130331		88411			130,045	178028		130,981	-82900	502,110		1077006
5	,,Հայփոստ,,ՓԲԸ	-100000										0		-100000
6	,,Հայջրմուտկոյուտի,,ՓԲԸ	35955	-15481	5383	-902		2,156	1951				13,432		42494.26
	,,Ղ-ՏԵԼԵԿՈՄ,,ՓԲԸ	43726										0		43726
	գազասպասարկում	6937										0		6937
7	,,Ֆյուչ,,ՍՊԸ	0												0
8	,,ԲԻԳ ՀԱԼԴԻՆԳ,,ՍՊԸ	7356722												7356722
9	Հումանիտարի միություն	205650												205650
10	,,Ջերմուկի Մոդելային,,ՍՊԸ	191000												191000
11	ռեֆինանսական ապառքեր բնակություն	-4183717					-127500	-1167480				-207,090.00		-5685787
12	ռեֆինանսական պարտքեր կազմակերպ.	-690782												-690782
13	այլ կրեդիտորներ	1174000		12400	99500				55,000.00	23,000.00		633,061		1996961.2
14	բաժնեմասնակցություն	54360		3500										57860
15	աշխատավարձ	0				76452						88,908.00		165360
16	գրասենյակ- գրամարկղ	0	-200			-23675.7	-89879.6	-116616	-16389.7			-3113.4		-249874.4
17	ԱԱՀ	0	196900											196900
18	,,կոյլաժ,,ՓԲԸ	110000												110000
19	,, ԱՐՊԱՆԻՎ,,ՍՊԸ	340000												340000
20	նյութական արժեքներ	-858598	-213500									-498,229.70		-1570327.7
	ԸՆԴԱՄԵՆԸ	**14274844**	**8791380**	**377,527.00**	**185700**	**55518.3**	**1462414.76**	**-218514**	**-63332.37**	**217987.82**	**-125000**	**1791313.51**	**0**	**26749839.02**
1	արագամաշ առարկաներ	22,111,347.00	105400	766062.4	51200	535788	1,627,480.00	2433540	3846250	32,040.00	336000	9,808,248.70	0	41653356.1
2	արագամաշ առարկաների մնացորդ	22111347	105400	766062.4	51200	535788	1,627,480.00	2433540	3846250	32040	336000	9808248.7	0	41653356.1
3	հիմնական միջոցներ	455,367,402.00	1325410153	6080585	1724190	843600	20,976,104.00	61287992	1792190	8818404	2051400	190521800	837928	2075711748
4	հիմնական միջոցների մաշվածություն	320,339,968.00	983800970	2771164	1724190	809856	13,443,712.00	5761921	612932	2193823	1843400	14612000	266823	1348180759
5	հիմնական միջոցների մնաց. Արժեք	135027434	341609183	3309421	0	33744	7532392	55526071	1179258	6624581	208000	175909800	571105	727530989
6	նյութական արժեքներ	0	0	0	0	0		0	0	0	0		0	0
7	*շահույթ - վնաս*	***14274844***	***8791380***	***377527***	***185700***	***55518.3***	***1462414.76***	***-218514***	***-63332.37***	***217987.82***	***-125000***	***1791313.51***	***0***	***26749839.02***

ՀԱՄԱՑՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱԵԹԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 14-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4-Ի N 41-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությանը, 16-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին ենթակետին, ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ -149 օրենքի 2-րդ հոդվածին և ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-148-Ն օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ընդունել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ավագանու 2008 թվականի նոյեմբերի 4-ի «Ջերմուկի քաղաքային համայնքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» N 41-Ն որոշումը: :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի բացակա			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի բացակա			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի բացակա			

Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2016 թվականի ապրիլի 28-ի
N 14-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ

Ա Վ Ա Գ Ա Ն Ո Ւ Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Համայնքի ավագանին ներկայացուցչական մարմին է և համայնքի բնակչության բարեկեցության, բարելավման նպատակով սեփական պատասխանատվությամբ իրականացնում է ժողովրդի իշխանությունը, օրենքի շրջանակներում ապահովում է համայնքային խնդիրների լուծումը և տնօրինում համայնքի սեփականությունը:

Համայնքի ավագանին կազմված է 11 անդամներից, գործում է Ջերմուկի համայնքապետարանում՝ Մյասնիկյան փողոց N 8 հասցեում:

1.Նպատակը

1.1. Սույն կանոնակարգն ընդունված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ օրենսդրական ակտերի հիման վրա:

1.2 Սույն կանոնակարգը նպատակաուղղված է Ջերմուկի համայնքի ավագանու, ավագանու հանձնաժողովների և անդամների գործառույթների արդյունավետ կատարմանը, ինչպես նաև նրանց փոխգործակցությանը համայնքապետարանի աշխատակազմի հետ տեղական ինքնակառավարման իրականացման գործում.

1.3 Սույն կանոնակարգը կարգավորում է ավագանու նիստերի անցկացման վայրը, կարգը, ինչպես նաև ավագանու որոշումների նախագծերի ներկայացման, քննարկման, ընդունման ու հրապարակման կարգը:

2.Համայնքի ավագանու գործունեության կազմակերպումը

2.1. Համայնքի ավագանին գործում է սույն կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, ինչպես նաև իր ստեղծած մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովների միջոցով:

2.2. Ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս, քան երկու ամիսը մեկ անգամ: Կարող են անցկացվել նաև արտահերթ նիստեր:

2.3. Համայնքի ղեկավարը համայնքի նստավայրում անհրաժեշտ պայմաններ է ստեղծում համայնքի ավագանու՝ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով նախատեսված կարգով գործունեությունն իրականացնելու համար:

2.4. Համայնքի ավագանու գործունեությունը հիմնվում է հարցերի ազատ քննարկման և կոլեկտիվ լուծման սկզբունքի վրա:

2.5. Համայնքի ավագանու աշխատանքային լեզուն հայերենն է:

II. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԵՐԸ

3.Նորընտիր ավագանու առաջին նիստը

3.1. Առաջին նիստի բացման առթիվ ողջույնի ելույթով հանդես է գալիս համայնքի ղեկավարը կամ պաշտոնատարը, որը և վարում է նիստը:

3.2. Նիստը վարողը ներկայացնում է ավագանու անդամներին՝ կարդալով յուրաքանչյուրի անուն, ազգանունը, մասնագիտությունը և կուսակցական պատկանելիությունը:

3.3. Ավագանու անդամը, հանդիսավոր պայմաններում, նորընտիր ավագանու առաջին նիստի ժամանակ երդվում է՝ «Ես ....., ստանձնելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ավագանու անդամի լիազորությունները, երդվում եմ իմ ողջ գործունեության ընթացքում առաջնորդվել

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ու օրենքով, անշեղորեն պահպանել Հայաստանի Հանրապետության քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, գործել ի նպաստ համայնքի զարգացման ու բարօրության»:
3.4. Երդումը տրվում է անհատական կարգով, տեքստի ընթերցմամբ:
3.5. Ավագանու անդամը ստորագրում է իր ընթերցած տեքստը:

4.Նիստի օրակարգի քննարկման կարգը՝

4.1. Ավագանու նիստը սկսվում է օրակարգի հաստատմամբ
4.2. Ավագանու նիստի ժամանակ օրակարգում ներառված հարցերի հերթականությունը կարող է փոխվել ավագանու որոշմամբ,
4.3. Օրակարգում ընդգրկված որոշման նախագծերը քննարկվում և քվեարկվում են առանձին-առանձին:

5.Համայնքի ավագանու նիստերի գումարման կարգը

5.1. Նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի առաջարկով:
5.2.Ավագանու որոշմամբ, նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, օրակարգում ընդգրկված հարցը կարող է տեղափոխվել հաջորդ նիստի քննարկմանը:

6. Համայնքի ավագանու արտահերթ նիստը
6.1. Համայնքի ավագանու արտահերթ նիստը գումարում է համայնքի ղեկավարը կամ նրա պաշտոնակատարը՝ իր կամ ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ:
6.2. Ավագանու արտահերթ նիստն անցկացվում է նախաձեռնողի սահմանած օրակարգով, ավագանու արտահերթ նիստը համարվում է ավարտված, եթե սպառվել են օրակարգի բոլոր հարցերը:
6.3. Արտահերթ նիստը կարող է ընդհատվել ավագանու որոշմամբ:
6.4. Արտահերթ և հերթական նիստերում քննարկվող հարցերի որոշման նախագծերի ընդունման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվում են համանման պահանջներ:

7.Նիստերի իրավազորությունը

7.1. Ավագանու նիստը սկսվելուց առաջ համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը անց է կացնում նիստին ներկայացած և քվեարկություններին մասնակցած ավագանու անդամների գրանցում:
7.2. Գրանցումներն արվում են հատուկ մատյանում, որտեղ նշվում է նաև նիստից ավագանու անդամի բացակայելու պատճառը:
7.3. Ավագանու նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են ավագանու անդամների կեսից ավելին:
7.4. Նիստի իրավազորությունը վերաբերվում է նաև նիստի ընդհատումներից կամ ընդմիջումներից հետո:

8.Դռնբաց և դռնփակ նիստեր

8.1. Ավագանու նիստերը դռնբաց են: Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստերին մասնակցում են համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները:
8.2. Ավագանու նիստին կարող է հրավիրվել և լսել ցանկացած անձի:
8.3.Ավագանու որոշումները ու ուղերձները կարող են հրապարակվել ռադիոյով, հեռուստատեսությամբ, մամուլում, հասարակական վայրերում կամ այլ ձևով՝ բնակչությանն այն մատչելի դարձնելու համար:
8.4. Առանձին դեպքերում դռնփակ նիստի առաջարկով կարող է հանդես գալ համայնքի ղեկավարը կամ ավագանու անդամը: Ավագանու նիստին ներկա անդամների ձայների երկու երրորդի որոշմամբ կարող է անցկացվել դռնփակ նիստ:
8.5.Դռնփակ նիստում, բացի ավագանու անդամներից, նիստը վարողից և արձանագրողից կարող են ներկա գտնվել միայն ավագանու որոշմամբ հրավիրված անձինք:
8.6. Դռնփակ նիստում ընդունված որոշումները հրատարակվում են:

9.Ավագանու նիստի վարման կարգը

Համայնքի ավագանու նիստը հրավիրում և վարում է համայնքի ղեկավարը կամ պաշտոնակատարը, նրանք ունեն խորհրդակցական ձայնի իրավունք:
Նիստը վարողը՝

ա/ բացում, ընդհատում և փակում է այն
բ/ ձայն է տալիս ելույթ ունեցողներին
գ/կազմակերպում է քվեարկության անցկացումը և դրանց արդյունքների հրապարակումը
դ/ կարող է ընդմիջել ելույթները՝ նիստի բնականոն ընթացքը վերականգնելու նպատակով:

10.Ավագանու նիստերի արձանագրումը

10.1.Համայնքի ավագանու նիստի արձանագրությունն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:
10.2.Նիստի արձանագրությունները պահպանվում են համայնքի ղեկավարի նստավայրում:
10.3. Նիստերի ավարտից հետո՝ 3 օրվա ընթացքում, այդ նիստերի արձանագրությունները վավերացվում են նիստին ներկա անդամների և համայնքի ղեկավարի կողմից:

11.Բնակչության մասնակցությունը

11.1 Բնակչությունը իրավունք ունի մասնակցելու համայնքի ավագանու նիստերին: Համայնքի ղեկավարը պարտավոր է ապահովելու անհրաժեշտ աշխատանքային պայմաններ բնակչության, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և լրատվամիջոցների մասնակցության համար: Ցանկացած անհատ կամ խումբ, ով ցանկանում է դիմել ավագանուն հերթական նիստի ժամանակ օրակարգային հարցերի վերաբերյալ, պետք է իր հարցադրումը գրավոր ներկայացնի աշխատակազմի քարտուղարին՝ նախքան նիստի սկսելը: Սակայն ավագանին ինքն է որոշում նիստի ժամանակ անհատին կամ խմբին լսելու հարցը:
11.2 Բնակչության հարցադրումները և առաջարկությունները օրակարգային ցանկացած հարցի վերաբերյալ թույլատրվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեկ երրորդով: Ավագանու նիստերի վերջում հատկացվում է 30 րոպե ժամանակ՝

քաղաքացիների կողմից ավագանուն ուղղված ցանկացած հարցադրմանը, որը վերաբերում է համայնքին, պատասխանելու համար:
11.3 Հարցադրումների և առաջարկությունների հեղինակը ներկայանում է՝ նշելով իր անունն ու ազգանունը: Համայնքի ղեկավարը հերթականությամբ խոսք է տրամադրում ելույթ ունենալ ցանկացողներին:
11.4 Հարցադրումների և առաջարկությունների հիման վրա ավագանին՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ կարող է դիմել հանձնաժողովներին կամ համայնքապետարանի աշխատակազմին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու հարցի դիտարկման համար:
11.5 Բնակիչների, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչները պարտավոր են զբաղեցնել իրենց համար նախատեսված տեղերը և հետևել սույն կանոնակարգի 9-րդ հոդվածով հաստատված ավագանու նիստի վարման կարգին:

III. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Համայնքի ավագանու նիստում հարցերի քննարկման կարգը

12.1 Հարցերի քննարկումը սկսվում է նիստի օրակարգի հաստատումից հետո:
Օրակարգային հարցի քննարկումը տեղի է ունենում հետևյալ հաջորդականությամբ՝
ա/ հիմնական զեկուցողի ելույթը
բ/ հարցեր զեկուցողին
գ/ հարակից զեկուցողի ելույթը
դ/ հարցեր հարակից զեկուցողին
ե/ մտքերի փոխանակություն
զ/ եզրափակիչ ելույթներ
է/ քվեարկություն
12.2 Որպես հիմնական զեկուցող հանդես է գալիս տվյալ հարցի հեղինակը, իսկ որպես հարակից զեկուցող՝ հանձնաժողովի ներկայացուցիչը:
12.3 Եթե հարցի քննարկումը ընդմիջվել է, ապա ընդմիջման ժամկետը լրանալուց հետո քննարկումը վերսկսվում է այն փուլից, որից այն ընդմիջվել էր:
12.4 Հարցի քննարկման ընթացքում հատկացվում են՝
ա/ զեկուցման համար՝ մինչև 10 րոպե
բ/ հարցերի համար՝ մինչև 3 րոպե
գ/ ելույթների համար՝ մինչև 3 ական րոպե
դ/ եզրափակիչ ելույթի համար մինչև 5-ական րոպե
12.5 Քննարկվող հարցի վերաբերյալ զեկուցողի առաջարկությունը քվեարկության է դրվում առաջին հերթին: Զեկուցողի առաջարկությունը չընդունվելու դեպքում քվեարկվում են մտքերի փոխանակության ժամանակ արված մյուս առաջարկությունները: Այդ առաջարկությունների քվեարկման հաջորդականությունը որոշում է համայնքի ղեկավարը:

13. Հարցեր տալու կարգը

13.1 Հարցեր տալու համար ավագանու անդամների հերթագրումը իրականացվում է նիստը վարողը:
13.2 Հարցերը տրվում են ըստ հերթագրման հաջորդականության, նիստը վարողի հայտարարությամբ

13.3 Եթե հարց տվողի և զեկուցողի միջև սկսվում է բանավեճ, ապա նիստը վարողը կարող է դադարեցնել հարցադրումը:
13.4 Մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողին հարցեր չեն տրվում:

14. Մտքերի փոխանակության կարգը

14.1 Մտքերի փոխանակության ժամանակ ավագանու յուրաքանչյուր անդամին ելույթ ունենալու հնարավորություն է տրվում:
14.2 Ավագանու անդամը կարող է նույն հարցի շուրջ երկրորդ անգամ ելույթ ունենալ միայն այն դեպքում, եթե ելույթով հանդես են եկել մյուս բոլոր ցանկություն ունեցողները:
14.3 Մտքերի փոխանակությունը, բացի ավագանու անդամներից և համայնքի ղեկավարից, այլ անձինք կարող են մասնակցել միայն ավագանու համաձայնությամբ:
14.4 Ավագանու անդամները ելույթ ունենալու ցանկությունը հայտնում են նստած տեղից ձեռք բարձրացնելու միջոցով կամ համայնքի ղեկավարին նախապես գրավոր իրազեկման միջոցով:
14.5 Ելույթ ունեցողները հանդես են գալիս նիստը վարողի հայտարարությամբ:
14.6 Համայնքի ղեկավարը դադարեցնում է համայնքի ավագանու ելույթը, եթե վերջինս գերազանցում է իրեն հատկացված ժամանակը՝ նախազգուշացումից հետո:

15. Որոշումների ընդունումը

15.1 Քննարկվող հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե այլ բան նախատեսված չէ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնակարգով:
15.2 Ավագանու քվեարկությանը կարող են դրվել միայն սույն կանոնակարգով սահմանված կարգով ավագանու անդամներին բաժանված և քննարկված նախագծերը:
15.3 Համայնքի ավագանու որոշման մեջ նշվում են որոշման նախագծին կողմ, դեմ և ձեռնպահ քվեարկած ավագանու անդամների ազգանունները, որոնց դիմաց նրանք ստորագրում են:
15.4 Համայնքի ավագանու որոշումը կնքում է համայնքի ղեկավարը:

16. Քվեարկության անցկացման կարգը

16.1 Նիստը վարողը քվեարկությունից առաջ կրկնում է քվեարկության դրվող առաջարկությունները, ճշտում է դրանց ձևակերպումները և հիշեցնում է, թե ձայների ինչ քանակով է ընդունվում որոշումը:
16.2 Քվեարկությունը իրականացնում է նիստը վարողի հայտարարությամբ: Ձայները հաշվում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:
16.3 Ավագանու անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ, դեմ, ձեռնպահ:
16.4 Քվեարկության ավարտից հետո նիստը վարողը հրապարակում է քվեարկության արդյունքները:

IV. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԸ

17. Համայնքի ավագանու անդամի իրավունքները

17.1 Համայնքի ավագանու անդամը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորություններ:

17.2 Ավագանու անդամը կարող է հարցեր ուղղել համայնքի ղեկավարին և ստանալ բանավոր կամ գրավոր պատասխան ավագանու հաջորդ հերթական նիստի ժամանակ, եթե ավագանին այլ որոշում չի ընդունում:

18. Համայնքի ավագանու անդամի պարտականությունները

Համայնքի ավագանու անդամը պարտավոր է իր գործունեության ընթացքում առաջնորդվել օրենքով և համայնքի բարօրությանն ուղղված համոզմունքով:
Համայնքի ավագանու անդամը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝
18.1 մասնակցել ավագանու այն հանձնաժողովների նիստերին, որոնց կազմում նա ընդգրկված է
18.2 նախապես ծանոթանալ իրեն փոխանցվող քննարկման ենթակա նյութերին
18.3 ծանոթանալ քաղաքացիներից ստացված դիմումներին և օրենքով սահմանված կարգով պատասխանել դրանց
18.4 իրազեկ լինել տեղական ինքնակառավարմանը վերաբերող օրենսդրությանը
18.5 հետևել համայնքի ավագանու և համայնքապետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող նյութերի լուսաբանմանը տեղական զանգվածային լրատվամիջոցներում, հարկ եղած դեպքում ներկայացնել ավագանու քննարկմանը
18.6 առաջնորդվել համայնքի ավագանու հաստատված կանոնակարգով:

19. Համայնքի ավագանու նիստերից անհարգելի բացակայելու դեպքում ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգը

19.1 Ավագանու անդամների մասնակցությունը նիստերին ու քվեարկություններին հաշվառում է համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարը:
19.2 Աշխատակազմի քարտուղարը եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին տեղեկանք է տալիս նախորդ նիստերից կամ քվեարկություններից իրենց բացակայությունների մասին:
19.3 Նիստերից ու քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին ավագանու անդամը տեղեկացնում է համայնքապետարան աշխատակազմի քարտուղարին: Աշխատակազմի քարտուղարը ավագանու նիստի ժամանակ հրապարակում է ավագանու անդամի բացակայության պատճառ, որը և արձանագրվում է:
19.4 Ավագանու անդամը նիստերից կամ քվեարկություններից իր բացակայության պատճառի մասին աշխատակազմի քարտուղարին, սույն կանոնակարգով սահմանված կարգով, չտեղեկացնելու դեպքում բացակայությունը համարվում է անհարգելի և արձանագրվում է համապատասխանաբար: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ աշխատակազմի քարտուղարին ներկայացվում է անաշխատունակության թերթիկ կամ տեղեկանք բժշկից:
19.5 Աշխատակազմի քարտուղարի կողմից տարվող հաշվառման հիման վրա, համայնքի ղեկավարը կամ ավագանու անդամը հերթական նիստի քննարկմանն է ներկայացնում ավագանու որոշման նախագիծը՝ մեկ տարվա ընթացքում նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից ավագանու անդամի բացակայելն անհարգելի համարելու մասին: Որոշման նախագծին կցվում է նիստերից կամ քվեարկություններից ավագանու անդամի բացակայության արձանագրված պատճառները:
19.6 Ավագանու անդամն առնվազն 7 օր առաջ գրավոր տեղեկացվում է ավագանու նիստում իր բացակայությունների հարցի քննարկման մասին: Ավագանու անդամի բացակայության դեպքում, հարցի քննարկումը հետաձգվում է մինչև հաջորդ հերթական կամ արտահերթ նիստը, որտեղ այն քննարկվում է անկախ նրա ներկայությունից:

19.7 Յուրաքանչյուր ավագանու անդամի բացակայությունների վերաբերյալ որոշման նախագիծը քննարկվում է սույն կանոնակարգի 12-րդ կետով սահմանված կարգով: Քննարկման ընթացքում ավագանու անդամը կարող է ելույթ ունենալ, պատասխանել հարցերին, հանդես գալ 5 րոպե տևողությամբ եզրափակիչ ելույթով:
19.8 Նիստերի կամ քվեարկությունների կեսից ավելին ավագանու անդամի բացակայելն անհարգելի համարելու մասին համայնքի ավագանու որոշումն ընդունվում է նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

20. Շահերի բախումը

20.1 Ավագանու անդամը չի կարող մասնակցել ավագանու այն որոշման քվեարկությանը, որը վերաբերվում է իր, իր ընտանիքի անդամների և մերձավոր բարեկամների /ծնող, քույր, եղբայր, երեխա/ շահերին:
20.2 Եթե առկա է վերը նշված հանգամանքներից որևէ մեկը, ապա համայնքի ավագանին տեղեկացվում է այդ մասին նախքան տվյալ հարցի քննարկման և քվեարկության սկսելը:
20.3 Եթե շահերի բախման առկայության դեպքում ի հայտ են գալիս վիճահարույց հանգամանքներ, ապա համայնքի ավագանին հետաձգում է որոշման կայացումը՝ լրացուցիչ պարզաբանումներ կատարելու նպատակով:
20.4 Ավագանու անդամները չեն կարող օգտագործել համայնքի սեփականությունը իրենց անձնական շահերի համար:

21. Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիների համայնքի պատվավոր քաղաքացի կոչում շնորհելու /զրկելու/ կարգը

Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը պատվավոր կոչում է, որը նախատեսված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Համայնքի պատվավոր քաղաքացու կոչումը շնորհվում է հետևյալ կարգով՝
21.1 Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը արժանանում են անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, գույքային կամ այլ դրությունից, այն քաղաքացիները, որոնք իրենց երկարամյա անբասիր աշխատանքով կամ բացառիկ մեծ վաստակով նպաստել են համայնքի բարգավաճմանը, ակնառու ավանդ ունեն մշակույթի, արվեստի, գրականության կամ գիտության զարգացման բնագավառում:
21.2 Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու /զրկելու/ առաջարկը ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքի ղեկավարը: Համայնքի ղեկավարին նման առաջարկով կարող են դիմել ավագանու անդամները, հասարակական միավորումները, հիմնադրամները, իրավաբանական անձանց միությունները, մշակութային, գիտական , կրթական կազմակերպությունները:
21.3 Առաջարկ ներկայացնողը պարտավոր է հիմնավորել այն, համակողմանիորեն լուսաբանել համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանը ներկայացվող քաղաքացու կյանքը, գործունեությունը, ներկայացնել համապատասխան նյութեր և քաղաքացու լուսանկարը:
21.4 Ստացված առաջարկությունները քննարկում է համայնքի ավագանին, և նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ որոշում է կայացնում համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու մասին:
21.5 Համայնքի պատվավոր քաղաքացու կոչմանն արժանացած անձանց տրվում է վկայական:

21.6 Համայնքի պատվավոր քաղաքացու կոչում շնորհելու /զրկելու/ մասին համայնքի ավագանու որոշումը հրապարակվում է, հնարավորության դեպքում լուսաբանվում է տեղական զանգվածային լրատվամիջոցներով:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

22. Հանձնաժողովները և նրանց գործունեությունը

22.1 Համայնքի ավագանին, իրեն վերապահված լիազորությունների իրականացման համար, իր որոշմամբ կարող է ստեղծել մշտական գործող կամ ժամանակավոր հանձնաժողովներ:
22.2 Հանձնաժողովները ստեղծվում են որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման և դրանց վերաբերյալ համայնքի ավագանու եզրակացություններ տալու նպատակով:
22.3 Հանձնաժողովների անդամների կազմը հաստատվում է համայնքի ավագանու որոշմամբ:

23. Մշտական հանձնաժողովները և նրանց գործունեությունը

23.1 Մշտական հանձնաժողովները կարող են լինել՝

ա/ գիտության, կրթության, մշակույթի և երիտասարդական հարցերի մշտական հանձնաժողով

բ/ սոցիալական, առողջապահության, սպորտի և ֆիզիկական կուլտուրայի հարցերի մշտական հանձնաժողով

գ/ քաղաքաշինության, տրանսպորտի, կոմունալ տնտեսության, բնության և շրջակա միջավայրի պահպանության մշտական հանձնաժողով

դ/ ֆինանսավարկային բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

ե/ ենթակառուցվածքների գործունեության հարցերով մշտական հանձնաժողով

զ/ համայնքի տնտեսական զարգացման և փոքր ու միջին բիզնեսի աջակցման մշտական հանձնաժողով

23.2 Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների կատարումն ապահովելու նպատակով ավագանին կարող է իր որոշմամբ ստեղծել նաև այլ մշտական կամ ժամանակավոր գործող հանձնաժողովներ:
23.2 Իրենց գործունեությունն իրականացնելու ընթացքում հանձնաժողովները կարող են աշխատանքի մեջ ներգրավել փորձագետների և խորհրդատուների, որոնք իրենց մատուցած ծառայությունների դիմաց կարող են վարձատրվել համայնքի բյուջեից:

24. Ժամանակավոր հանձնաժողովը և նրա գործունեությունը

24.1 Ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են առանձին որոշման նախագծերի նախնական քննարկման կամ որոշակի իրադարձությունների և փաստերի մասին ավագանուն եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար:
24.2 Ավագանու ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում է նրա խնդիրները, գործունեության ժամկետը և աշխատակարգը:
24.3 Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը սահմանված ժամկետում զեկուցում է ավագանու նիստում:

25. Հանձնաժողովի աշխատանքների համակարգումը

25.1 Մշտական հանձնաժողովի աշխատանքները համակարգվում են իր կողմից ընդունված աշխատակարգի միջոցով: Հանձնաժողովի կազմից ընտրվում է հանձնաժողովի նախագահ, եթե աշխատակարգով այլ բան նախատեսված չէ:

25.2 Հանձնաժողովի նախագահի թեկնածությունը հաստատվում է հանձնաժողովի նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

25.3 Մշտական հանձնաժողովի նախագահի լիազորությունները դադարում են, եթե դադարել են նրա որպես ավագանու լիազորությունները:

25.4 Հանձնաժողովի նախագահը՝

ա/ նախապատրաստում և վարում է հանձնաժողովի նիստերը.

բ/ գումարում է հանձնաժողովի արտահերթ նիստերը.

գ/ հանձնաժողովի հաստատմանն է ներկայացնում հանձնաժողովի նիստի օրակարգի նախագիծը

դ/ ավագանու նիստին է ներկայացնում հանձնաժողովի եզրակացությունները և առաջարկությունները ուսումնասիրվող հարցի վերաբերյալ

ե/ ընթացք է տալիս և պատասխանում է հանձնաժողովին ուղղված դիմումներին

զ/ ապահովում է հանձնաժողովի որոշումների կատարումը

25.5 Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում են համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

26. Հանձնաժողովի նիստի հրավիրման կարգը

26.1 Հանձնաժողովի նիստերը տեղի են ունենում համայնքի ավագանու նստավայրում: Այլ վայրում հանձնաժողովի նիստ կարող է անցկացվել հանձնաժողովի որոշմամբ:

26.2 Հանձնաժողովի արտահերթ նիստը գումարվում է ըստ անհրաժեշտության՝ նիստը նախաձեռնողի սահմանած ժամկետում համաձայն հանձնաժողովի աշխատակարգի:

26.3 Ժամանակավոր հանձնաժողովի հերթական նիստերը գումարվում են հանձնաժողովի կողմից սահմանած ժամկետում:

27. Հանձնաժողովի նիստերի անցկացման կարգը

27.1 Հանձնաժողովի նիստում կարող են ներկա գտնվել ավագանու անդամները, համայնքի ղեկավարը և հանձնաժողովի կողմից հրավիրված այլ անձինք:

27.2 Հանձնաժողովի որոշմամբ հրավիրված անձինք տեղեկացվում են քննարկումներից առնվազն երեք օր առաջ:

28. Հանձնաժողովի նիստում քննարկումների կազմակերպման և որոշումների ընդունման կարգը

28.1 Հանձնաժողովի նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումը այլ հարցեր չեն քննարկվում:

Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

ա/ հիմնական զեկուցողի ելույթը

բ/ հարցեր հիմնական զեկուցողին

գ/ հարակից զեկուցողի ելույթը /եթե այդպիսին կան/

դ/ հարցեր հարակից զեկուցողին

ե/ մտքերի փոխանակություն

զ/ հիմնական զեկուցողի եզրափակիչ ելույթը.

է/ քվեարկություն

28.2 Հանձնաժողովի նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարված է հարցի քննարկման ավարտից հետո:
28.3 Նիստի քվեարկությունները կատարվում են միայն տվյալ հանձնաժողովի անդամների առաջարկությամբ:
28.4 Հանձնաժողովի անդամը կարող է հրաժարվել քվեարկությանը մասնակցելուց:
28.5 Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:
28.6 Նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի անդամները:

VI. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՆ

29. Բյուջեի նախագծի քննարկման կարգը

29.1 Համայնքի բյուջեի նախագիծը համայնքի ավագանուն է ներկայացնում համայնքի ղեկավարը: Բյուջեի նախագիծը ներկայացնելուց հետո հանդես են գալիս՝

ա/ համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը

բ/ ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

29.2 Համայնքի ավագանու անդամները համայնքի ղեկավարին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սույն կանոնակարգի 13-րդ կետով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն սույն կանոնակարգի 14-րդ կետով սահմանված կարգով:

30. Համայնքի բյուջեի կատարման հաշվետվության ներկայացման և քննարկման ժամկետները

30.1 Համայնքի ղեկավարը եռամսյակը մեկ անգամ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը, բյուջեի կատարման ընթացքի մասին հաղորդումներ է ներկայացնում համայնքի ավագանուն:
30.2 Համայնքի ղեկավարը համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը համայնքի ավագանուն ներկայացնում է մինչև հաշվետու բյուջետային տարվան հաջորդող տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը:
30.3 Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ավագանու նիստում քննարկվում և հաստատվում է աուդիտորական մասնագիտացված կազմակերպության եզրակացության առկայությամբ՝ մինչև ընթացիկ տարվա մարտի 20-ը:

31. Համայնքի բյուջեի կատարման հաշվետվությունը, բովանդակությունը և քննարկման կարգը

31.1 Համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը ներառում է՝

ա/ տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի հիմնավորվածության վերաբերյալ, դրանց համապատասխան վերլուծությունը հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված ցուցանիշների միջև

բ/ տեղեկություններ հաշվետու տարում համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին համապատասխան հիմնավորումներով

գ/ տեղեկություններ հաշվետու տարում բյուջեի պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ

դ/ այլ տեղեկություններ, որոնք համայնքի ղեկավարն անհրաժեշտ է համարում համայնքի բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար:

31.2 Համայնքի ավագանու նիստում բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներկայացնում է համայնքի ղեկավարը: Զեկուցումներով կարող են հանդես գալ՝

ա/ համապատասխան հանձնաժողովի ներկայացուցիչը՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ հանձնաժողովի եզրակացությունը

բ/ ըստ ցանկության՝ մյուս հանձնաժողովների մեկական ներկայացուցիչները՝ ներկայացնելով բյուջեի նախագծի վերաբերյալ համապատասխան հանձնաժողովի եզրակացությունը:

31.3 Համայնքի ավագանու անդամները համայնքի ղեկավարին և մյուս զեկուցողներին հարցեր են տալիս սույն օրենքի 13-րդ կետով սահմանված կարգով, որից հետո տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ սույն օրենքի 14-րդ կետով սահմանված կարգով:

31.4 Մտքերի փոխանակման ավարտից հետո քվեարկության է դրվում բյուջի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին ավագանու որոշման նախագիծը:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

32. Կանոնակարգի փոփոխությունները

Սույն կանոնակարգը կարող է փոփոխվել համայնքի ավագանու որոշմամբ: Ցանկացած կանոնակարգային փոփոխություն պետք է համահունչ լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի:

Փոփոխությունների ընդունումը պահանջում է ավագանու նիստին ներկա անդամների ձայների ավելի քան երկու երրորդը:

Աշխատակազմի քարտուղար՝ ***Գոհար Թադևոսյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 15-Ն

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի NN 25-Ն,26-Ն ԵՎ 27-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և նույն հոդվածի 5-րդ կետով՝ ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ -149 օրենքի 2-րդ հոդվածին և ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-148-Ն օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Ջերմուկի քաղաքային համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 25-Ն և «Ջերմուկի համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 27-Ն որոշումների վերնագրերում, տեքստերում և հավելվածներում «քաղաքապետարան» բառը փոխարինել «համայնքապետարան» բառով, «Ջերմուկի քաղաքային համայնք» բառերը՝ փոխարինել «Ջերմուկի համայնք» բառերով՝ իրենց համապատասխան հոլովաձևով:

2. Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Ջերմուկի համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի ձևավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 26-Ն որոշման հավելվածում «համայնքի աշխատակազմի» բառերը փոխարինել «համայնքապետարանի աշխատակազմի» բառերով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		

Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 16-Ն

«ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ Կ.Ա.ԱՍՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱԱՌԵՎՏՐԱՅԻՆ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և նույն հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-148-Ն օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. «Ջերմուկի քաղաքային համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել «Ջերմուկի համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Ջերմուկի համայնքի Կ. Ա. Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		

Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-....0..... ձեռնպահ- ..0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2016 թ. ապրիլի 28-ի N 16-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԵՆ ԱՐԱՐԱՏԻ ԱՍՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԱԽՄԱՏԻ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Ջերմուկի համայնքի Կարեն Արարատի Ասրյանի անվան շախմատի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է (այսուհետ՝ դպրոց), որն իրականացնում է ուսումնամարզական ծրագրեր շախմատ խաղի մասսայականացման նպատակով, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ ու պարտականություններ:

2. Դպրոցի հիմնադիրը Ջերմուկի համայնքի ավագանին է (այսուհետ՝ հիմնադիր): Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ:

3. Դպրոցի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզ Ջերմուկի համայնք, Շահումյան փողոց N 7/1:

4. Դպրոցը տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքով ունի առանձնացված ու իրեն ամրացված գույք: Դպրոցի պարտավորությունների համար պատասխանատու է հիմնադիրը: Դպրոցը հիմնադիրի համաձայնությամբ իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Դպրոցի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում հիմնադիրը:

7. Դպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադիրի որոշմամբ:

8. Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնադրի համաձայնությամբ կարող է համագործակցել օտարերկրյա նմանատիպ հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Դպրոցում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը

10. Դպրոցը հաշվետու է հիմնադիրին:

II. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Դպրոցի գործունեության առարկան և նպատակը շախմատի զարգացմանն ու մասսայականացմանը նպաստող կրթական, մարզական, կազմակերպչական և այլ բնույթի գործունեության իրականացումն է:

11. Դպրոցի կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

12. Դպրոցը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է շախմատի ուսուցման մեջ ընդգրկված դպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, վարվեցողության կանոններին ծանոթացումը և դրանց կիրառումը, երեխայի մտավոր, բարոյական ու ֆիզիկական զարգացման ձևավորումը:

13. Դպրոցի գործունեությունը հիմնվում է մարդասիրության, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման և ինքնավարության սկզբունքների վրա:

14. Դպրոցը պատասխանատու է երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:

15. Դպրոցը աջակցում է շախմատի մարզաձևով զբաղվող ինչպես դպրոցական, այնպես էլ չափահաս տարիքի անձանց ինքնադրսևորմանը՝ այդ նպատակով պարբերաբար կազմակերպում է շախմատի առաջնություններ, մասնակցում է մարզային, հանրապետական և միջազգային մրցումների:

III. ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

16. Դպրոցի ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ին և ավարտվում է մայիսի 30-ին:

17. Ուսուցման կազմակերպման նպատակով երեխաների ընդունելությունը ազատ է և կատարվում է ծնողների դիմումների հիման վրա կամավորության սկզբունքով: Յուրաքանչյուր խումբը համալրվում է մինչև 12 երեխայով:

18. Յուրաքանչյուր խմբի համար պարապմունքները իրականացվում են շաբաթական երկու օր՝ 2-ական ժամ տևողությամբ՝ տնօրենի կողմից կազմված գրաֆիկին համապատասխան:

19. Ուսուցումն անվճար է: Սովորողներն իրավունք ունեն անվճար օգտվելու դպրոցի գույքից և այլ պարագաներից:

IV. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

20. Դպրոցի կառավարումն իրականացնում են հիմնադիրը և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ դպրոցի տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

21. Դպրոցի հիմնադիրն ունի հիմնարկի գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

22. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ դպրոցի հիմնադրումը.

բ/ դպրոցի գործունեության առարկայի ու նպատակների սահմանումը.

գ/ դպրոցին օգտագործման ու տնօրինման իրավունքով ամրացվող՝ հիմնադրին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ/ դպրոցի կանոնադրության ստեղծումը և դրանում փոփոխությունների կատարումը ե/ դպրոցի վերակազմակերպումը և լուծարումը

զ/ դպրոցի լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

է/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը.

23. Համայնքի ղեկավարը՝

ա/ իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

բ/ վերահսկողություն է իրականացնում դպրոցի գործունեության նկատմամբ

գ/ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում դպրոցի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

դ/ լսում է դպրոցի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե/ վերահսկողություն է իրականացնում դպրոցին ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ/ համայնքի ավագանու որոշմամբ՝ դպրոցի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է/ հաստատում է դպրոցի տարեկան հաշվետվությունները և հաշվեկշիռը.

ը/ իրականացնում է դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

24. Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով դպրոցում կարող են ստեղծվել ծնողների, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

25. Տնօրենը՝

ա/ իրականացնում է դպրոցի ընթացիկ գործունեության ղեկավարումը.

բ/ օրենքներով, հիմնադրի, համայնքի ղեկավարի, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է դպրոցի գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար.

գ/ առանց լիազորագրի հանդես է գալիս դպրոցի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում գործարքներ.

դ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է դպրոցի գույքը և ֆինանսական միջոցները.

ե/ տալիս է դպրոցի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ/ օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է դպրոցի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ը/ կազմում է տարեկան ծախսերի նախահաշիվը և այն ներկայացնում համայնքի ղեկավարի հաստատմանը.

թ/ սահմանում է դպրոցի աշխատանքային ռեժիմը, դասացուցակը, պարապմունքների ժամանակացույցը և ուսումնական պլանը.

ժ/ կազմակերպում է շախմատի մրցաշարերին դպրոցի մասնակցությունը :

26. Տնօրենի բացակայության դեպքում , համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

27. Մարզիչը՝

ա/ պարապմունքները իրականացնում է սահմանված ուսումնական պլանին և ժամանակացույցին համապատասխան, վարում է պարապմունքների հաշվառման մատյանը.

բ/ զարգացնում է երեխաների մարզական և ստեղծագործական ունակությունները.

գ/ մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում՝ մանկավարժական և խորհրդատվական աշխատանք ծնողների շրջանում:

V. ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

28. Դպրոցի գույքը ձևավորվում է դպրոցի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից տնօրինման իրավունքով նրան ամրացվող, ինչպես նաև դպրոցի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

29. Դպրոցի լուծարումից հետո մնացած գույքը հիմնադրի սեփականությունն է:

30. Դպրոցի գույքի պահպանման հոգսը կրում է դպրոցը:

31. Դպրոցի գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

32. Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից դպրոցին ամրացված գույքը, եթե այն չի օգտագործվում ըստ նշանակության:

33. Դպրոցն իրավունք չունի առանց համայնքի ղեկավարի գրավոր համաձայնության իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Դպրոցն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, համայնքի ղեկավարի որոշմամբ կամ դպրոցի կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարվանից

ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում դպրոցի ստացած եկամուտները դպրոցի սեփականությունն են: Դպրոցին ամրացված գույքի օգտագործման ընթացքում

առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Դպրոցի լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

34. Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

35. Դպրոցը ֆինանսավորում է հիմնադիրը: Դպրոցի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից՝ բարեգործական, նպատակային ներդրումներ, նվիրատվություններ և այլն:

VI. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

36. Դպրոցը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 17-Ն

«ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՆՈՒՀ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և նույն հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-148-Ն օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. «Ջերմուկի քաղաքային համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել «Ջերմուկի համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2. Հաստատել «Ջերմուկի համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՆՈՒՀ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			

Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-....0.... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2016 թվականի ապրիլի 28-ի N 17-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՋԱՏԻԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Ջերմուկի համայնքի «Ջատիկ» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ուսումնադաստիարակչական հաստատություն է (այսուհետ՝ հաստատություն), որն իրականացնում է նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների շրջանակներում նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

2.Հաստատության հիմնադիրը Ջերմուկի քաղաքային համայնքի ավագանին է:

Հաստատությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով, համայնքի ավագանու, համայնքի ղեկավարի որոշումներով ու կարգադրություններով և սույն կանոնադրությամբ:

3. Հաստատության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետութուն, Վայոց ձորի մարզ, Ջերմուկ, Ձախափնյակ 2-րդ փողոց N 3/2 հասցեում:

4. Հաստատությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված ու իրեն ամրացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Հաստատությունը հիմնադրի համաձայնությամբ իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Հաստատությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Հաստատությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Հաստատությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Հաստատությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9.Հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

10. Հաստատության ղեկավարների ու մանկավարժների ատեստավորումը կազմակերպվում է հինգ տարին մեկ, այն պարտադիր է և իրականացվում է նախարարության սահմանած կարգին ու ժամանակացույցին համապատասխան:

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

11. Հաստատության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
12. Հաստատության կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
13. Հաստատությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է հաստատությունում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելը և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր,բարոյական. գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:
14. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:
15. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդներին և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:
16. Հաստատությունը կարող է զբաղվել Հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ (լրացուցիչ վճարովի կրթական ծրագրերի-ծառայությունների իրականացում):

III. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

17. Հաստատության երեխաների համակազմի համալրման կարգն ու խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:
18. Հաստատություն ընդունվում են կրտսեր և ավագ նախադպրոցական՝ 3-ից մինչև 6 տարեկան երեխաները՝ առողջության մասին բժշկական տեղեկանքի հիման վրա:
19. Հաստատությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Հաստատությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:
20. Հաստատության գործունեությունը համապատասխանում է մանկապարտեզ տեսակին, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքը:

21. Հաստատության աշխատանքային ռեժիմը, հաստատությունում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը սահմանում է հիմնադիրը՝ նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:
22. Հաստատության երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, ով տնօրինության հետ համահավասար պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
23. Հաստատության մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

24. Հաստատության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները, բուժաշխատողները, դայակները և հիմնադիրը:
25. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանն ու այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:
26. Հաստատության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:.Երեխայի և հաստատության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
27.Հաստատությունում աշխատանքի ընդունվում են այն անձիք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական- մանկավարժական որոկավորում:
28. Հաստատության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները և արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, հաստատության կանոնադրությամբ և աշխատանաքային պայմանագրով:
29. Հաստատության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու հաստատության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

30. Հաստատության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հաստատության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
31. Հաստատության հիմնադիրն ունի հաստատության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
32. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են ՝
ա/ ավագանու համաձայնությամբ՝ հաստատության հիմնադրումը.
բ/ հաստատության գործունեության առարկայի և նպատակների , այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը:
գ/ հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
դ/ հաստատության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե/ հաստատության կառավարման համակարգի սահմանումը.
զ/ հաստատության վերակազմակերպումը և լուծարումը.
է/ հաստատության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
ը/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
33. Համայնքի ղեկավարն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
34. Համայնքի ղեկավարը՝
ա/ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է հաստատության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
բ/վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.
գ/ կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.
դ/ լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
ե/ վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.
զ/ համայնքի ավագանու որոշմամբ՝ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
է/ հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.
ը/ իրականացնում է հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:
35. Հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով հաստատությունում կարող են ստեղծվել ծնողների, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:
36. Տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը:Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված
լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանանգրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:
37. Տնօրենը՝
ա/ առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.
բ/ սահմանում է հաստատության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.
գ/ նախագահում է հաստատության մանկավարժական խորհրդի նիստերը.
դ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի ու ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.
ե/ տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ/ օրենքով սահմանված կարգով աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.
է/ բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.
ը/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ,հրահանգներ տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
թ) իրականացնում է մանկավարժական կադրերի ու սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար:
թա/ վերահսկողություն է իրականացնում հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.
թբ/ ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոններին, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.
թգ/ նախարարության հաստատած օրինակելի հաստիքացուցակի և նորմատիվների հիման վրա կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում հիմնադիրի հաստատմանը.
թդ/ իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող և հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:
38. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշմամբ /կարգադրության/ համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:
39. Ուսումնական գծով տնօրենի օգնականը /մեթոդիստ, ավագ դաստիարակ/ '
ա/ իրականացնում է նախարարության հաստատած նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.
բ/ ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների ու մեթոդական հանձնարարականների կատարումը.
գ/ պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.
դ/ կազմակերպում է հաստատության մեթոդական աշխատանքը.
ե/ ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.
զ/ դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորություններին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.
է/ կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում խորհրդատվություններ ու մանկավարժական աջակցության ցուցաբերման միջոցներով:
40. Դաստիարակը՝
ա/ պարտավոր է պահպանել և ամրապնդել երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջությունը, զարգացնել նրանց ստեղծագործական ունակությունները, հիմքեր ստեղծել նրանց մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման համար.
բ/ պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
գ/ մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում՝ մանկավարժական և խորհրդատվական աշխատանք ծնողների շրջանում:
41. Երաժշտական ղեկավարը՝
ա/ տիպային ծրագրին համապատասխան դաստիարակների հետ համատեղ, իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
բ/ ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական ու գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

42 . Տնտեսական աշխատանքի գծով տնօրենի օգնականը՝
ա/ կազմակերպում է հաստատության տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումն ու դրանց պահպանությունը.
բ/ մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
գ/ հետևում է հաստատության տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
դ/ պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:
43. Բուժքույրը՝
ա/ հսկում է հաստատության ընդհանուր սանիտարահիգիենիկ վիճակը
բ/ իրականացնում է երեխաների ամենօրյա ընդունման հսկողությունը՝ մսուրային խմբերում, ընդ որում՝ 0-3 տարեկան երեխաների ընդունման հսկողության արդյունքները արձանագրում է երեխայի առողջական վիճակի դիտարկման մատյանում
գ/ կատարում է ամենամյա սկրինինգ թեստեր (քաշ, հասակ, Զ/Ճ, տեսողություն, լսողություն)
դ/ ապահովում է դիսպանսեր խմբի երեխաներիպարբերական քննությունները տարածքային պոլիկլինիկայում (ծնողների օգնությամբ)
ե/ ստուգում է երեխաների պատվաստումային կարգավիճակը, պոլիկլինիկայում կատարված պատվաստումները գրանցում է Երեխայի բժշկական քարտում
զ/ ապահովում է անհետաձգելի (առաջին) բուժօգնությունը, ըստ անհրաժեշտության կազմակերպում է երեխային բուժհաստատություն տեղափոխելը
է/ ամենօրյա սանիտարահիգիենիկ հսկողություն է ապահովում խոհանոցի և տրամադրվող սննդի նկատմամբ
ը/ հայտնաբերում է մակաբույծ և վարակիչ հիվանդությունները, հաշվառում և հաղորդումէ այդ մասին, կազմակերպում է սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումներ
թ/ Հաստատություն ընդունված յուրաքանչյուր երեխայի համար ապահովում է երեխայի բժշկական փաստաթղթերի առկայությունը (Երեխայի բժշկական քարը):

VI . ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

44. Հաստատության սեփականությունը ձևավորվում է հաստատության հիմանդրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան ամրացվող, ինչպես նաև հաստատության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
45. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և /կամ/ իր կանոնադրությանը համապատասխան տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը: Սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքը /բացառությամբ անշարժ գույքի/՝ կարող է օտարվել /վաճառվել, նվիրվել, դուրս գրվել/, կամ վարձակալությամբ տրվել միայն հիմնադիրի գրավոր համաձայնությամբ: Հաստատության լուծարումից հետո մնացած գույքը հիմնադիրի սեփականությունն է:
46. Հաստատության սեփականության պահպանման հոգսը կրում է հաստատությունը:
47. Հաստատության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
48. Հիմնադիրը իրավունք ունի վերցնելու իր կողմից հաստատությանն ամրացված գույքը:
49. Հաստատությունն իրավունք չունի առանց հիմնադիրի գրավոր համաձայնության իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հաստատությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից

սահմանված դեպքերի:Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հաստատության ստացած եկամուտները հաստատության սեփականությունն են: Հաստատության ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են: Հաստատության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

50. Հաստատությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

51. Հաստատությունը ֆինանսավորում է հիմադիրը: Հաստատության ֆիանանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և ՀՀ օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա/ հիմնադրի կոմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ/ բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, ՀՀ և օտարերկրյա կազմակերպություններ ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53.Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի /վերստուգման/՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Հաստատությունը վերակազմակերպվում և լուծարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 18-Ն

«ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ N 1 ԴՊՐՈՑ» ԵՎ «ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՎԵՍՏԻ N 2 ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և նույն հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-148-Ն օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.«Ջերմուկ քաղաքի արվեստի N 1 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել «Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

2.«Ջերմուկ քաղաքի արվեստի N 2 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը անվանափոխել «Ջերմուկի համայնքի արվեստի N 2 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

3. Հաստատել «Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:

4. Հաստատել «Ջերմուկի համայնքի արվեստի N 2 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:

5. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ղեկավարի 2011 թվականի հուլիսի 27-ի ««Ջերմուկ քաղաքի արվեստի N 1 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» N 63-Ա որոշման 3-րդ կետը և ««Ջերմուկ քաղաքի արվեստի N 2 դպրոց>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» N 64-Ա որոշման 3-րդ կետը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....6..... դեմ-.....0.... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված 2
Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի
Ապրիլի 28-ի N 18-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ N 2 ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ջերմուկի համայնքի արվեստի N 2 դպրոց» համայքնային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կրթական և մշակույթային կազմակերպություն:

1.2 Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3 Դպրոցը գտնվում է Վայոց Ձոր մարզի Ջերմուկի համայնքի, Ձախափնյակի 2-րդ փողոց N 3/2 հասցեում:

1.4 Դպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն իր անունից ձեռք է բերում և իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.6 Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.7 Դպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.8 Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.9 Դպրոցում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

1.10 Դպրոցի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման /պետական գրանցման/ և դադարում է լուծարման ավարտի /լուծարման պետական գրանցման/ պահից:

1.11 Հայաստանի Հանրապետությունը և համայնքը պատասխանատվություն չեն կրում Դպրոցի պարտավորությունների համար: Դպրոցն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայասատանի Հանրապետության և համայնքի պարտավորությունների համար:

1.12 Դպրոցնի անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «,Ջերմուկի համայնքի արվեստի N 2 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

կրճատ՝ «Ջերմուկի ԱԴ-2» ՀՈԱԿ

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Դպրոցի գործունեության առարկան և նպատակը երաժշտական կրթական, մշակույթային, համերգային, հրատարակչական բնույթի գործունեության իրականացումն է:

2.2 Երաժշտական կրթական, մշակույթային գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, պայմաններ ստեղծում ինքնակրթության և լրացուցիչ /նախասիրական, նախամասնագիտական/ կրթության պահանջմունքների բավարարման համար:

2.3 Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.4 Դպրոցը պատասխանատու է պետական չափորոշիչներին, հանրակրթական պետական ծրագրերին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

2.5 Դպրոցը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:

Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևերն են անհատական և խմբային պարապմունքները՝ անհատական դասի տևողությունը՝ 45, խմբակայինը՝ 40 րոպե է, բացառիկ դեպքերում այն կարող է փոփոխվել Հիմնադրի կողմից:

2.6 Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների , ուսումնական ծրագրերի և դասացուցակի հիման վրա:

Ուսումնական պլաններում առանձին առարկաներին հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի պետական տիպային ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:

2.7 Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Դպրոցը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում ՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ դպրոցը, բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա դպրոցը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով , որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պետական գրանցման պահից Դպրոցը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

3.2 Դպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.3 Դպրոցը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր /մասնակից/ միայն Հիմնադրի որոշմամբ:

3.4 Դպրոցն իրավունք ունի ստեղծել /Հիմնադրի որոշմամբ/ առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցրություններ, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքներում:

3.5 Կառավարչական, սոցիալ- մշակույթային , կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Դպրոցը կարող է ստեղծել հիմնարկներ:

3.6 Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3.7 Դպրոցի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձիք չեն և գործում են Դպրոցի հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են դպրոցի լիազորագրերի հիման վրա:

3.8 Դպրոցն իրավունք ունի՝

3.8.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք , այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը:

3.8.2 Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները , այդ թվում փոխառուի միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետության և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր:

3.8.3 Հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

3.8.4 Մեկ տարուց ոչ ավելի ժամկետով իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության:

3.8.5 Օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու:

3.8.6 Սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ , արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց /կամ/ ձեռնարկությունների , կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցված ծառայություններից , այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ:

3.8.7 Օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքից;

3.9 Դպրոցն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման;

3.10 Դպրոցը պարտավորվում է՝

3.10.1 օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություններ :

3.10.2 աշխատանքային պայմանագրեր կնքել դպրոցի աշխատակիցների հետ

3.10.3 պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար;

3.10.4 օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել դպրոցի սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները:

3.10.5 հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը

3.10.6 ապահովել դպրոցի փաստաթղթերի /դպրոցի կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի , դպրոցի ներքին փաստաթղթերի , առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների և կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի/ պահպանումը:

3.10.7 կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4.ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

4.1 Դպրոցի հիմնադիրն ունի դպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.2 Դպրոցի հիմնադիրն իրավունք ունի՝

4.2.1 հետ վերցնել իր կողմից դպրոցին ամրակցված իր գույքը /այդ թվում գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները/:

4.2.2 կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել դպրոցի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:

4.2.3 վերահսկողություն իրականացնել դպրոցին ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ:

4.2.4 հայցով դիմել դատարան, օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքն անվավեր ճանաչելու նպատակով:

4.2.5 օգտվել օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3 Դպրոցի հիմնադիրը պարտավոր է՝

4.3.1 ապահովել դպրոցի բնականոն գործունեությունը

4.3.2 չհրապարակել դպրոցի գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ

4.3.3 կատարել դպրոցի նկատմամբ ստանձնած պարտավորությունները;

4.3.4 պահպանել սույն կանոնադրության դրույթները:

5. ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԸ

5.1 Դպրոցը հանդիսանում է սեփականատեր՝

5.1.1 Դպրոցի հիմնադրի կողմից / հիմնադրման ժամանակ և հետագայում/ սեփականության իրավունքով հանձնված գույքի

5.1.2 դպրոցի գործունեության հետևանքով արտադրված արտադրանքի և ձեռք բերված գույքի

5.1.3 ստացված եկամուտների

5.1.4 ուսումնական վարձավճարի գումարներից ստացված միջոցների /որոնք կարող են օգտագործվել բացառապես որպես աշխատավարձ և կոմունալ ու տնտեսական այլ ծախսերի կատարման նպատակով/:

5.2 Դպրոցի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք ՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների , որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց;

5.3 Դպրոցի գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու , իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու առանձնահատկությունները կապված գույքը դպրոցի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքով;

5.4 Դպրոցի հիմնադիրը դպրոցին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ;

5.5 Դպրոցի հիմնադիրը կարող է դպրոցին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք

5.6 Ամրացված գույքի օգտագործման արդյունքում դպրոցի ստացած եկամուտները դպրոցի սեփականությունն են;

5.7 Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են;

5.8 Դպրոցի գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով;

5.9 Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով և չափով հարկերը, տուրքերը, և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը դպրոցն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների /դպրոցի տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռք բերում, դպրոցի աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռք բերում, գրականության ձեռք բերում, բրոշյուրների, գրքույկների, տեղեկագրերի հրապարակման կազմակերպում, պարգևատրումների, հավելավճարների, խրախուսման այլ միջոցներով դպրոցի աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացումն , աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացներին և այլն/:

6. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1 Դպրոցի կառավարման մարմիններն են՝ դպրոցի հիմնադիրը և տնօրենը:

6.2 Դպրոցի կառավարման բարձրագույն մարմինը դպրոցի հիմնադիրն է, որն իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումն ու ունի դպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով չնախատեսված դեպքերի:

6.3 Դպրոցի հիմնադիրը ապահովում է դպրոցի բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության կատարման անպատշաճ իրականացման համար:

6.4 Դպրոցի հիմնադրի իրավասությանն են պատկանում՝

6.4.1 դպրոցի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը

6.4.2 դպրոցի կանոնադրության հաստատումը՝ նոր խմբագրությամբ

6.4.3 դպրոցին սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը

6.4.4 դպրոցին ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի և կազմի հաստատումը

6.4.5 դպրոցի վերակազմակերպումը

6.4.6 դպրոցի լուծարումը

6.4.7 դպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների հաստատումը

6.4.8 կազմակերպությունների հիմնադրումը

6.4.9 կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը

6.4.10 դպրոցի կառավարման համակարգի սահմանումը, դպրոցի տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

6.4.11 դպրոցի գործունեության վերահսկողության իրականացումը

6.4.12 դպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ դպրոցի կողմից իրականացվող գործունեության տեսակների, նոր մասնագիտություններով կրթական ծրագրերի սահմանումը:

6.4.13 մասնագիտությունների և մասնագիտացումների անվանացանկերի հաստատումը

6.4.14 ըստ մասնագիտությունների՝ ուսումնական պլանների հաստատումը

6.4.15 դպրոցի աուդիտն իրականացնող անձի հաստատումը

6.4.16 աուդիտի իրականացման որոշումն ընդունելը

6.4.17 դպրոցի տարեկան ծախսերի, այդ թվում՝ անվճար ուսուցման ծախսերի, արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը

6.4.18 ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով ընդունելության տեղերի հաստատումը ըստ մասնագիտությունների

6.4.19 դպրոցի տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը:

6.4.20 դպրոցի շահույթի և վնասների օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը:

6.4.21 դպրոցի մասնաճյուղերի ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքների տարեկան արդյունքների հաստատումը:

6.4.22 դպրոցի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքներ / որոնց արժեքը գործարքին փոխկապակցվաղ այլ գործարքների հետ միասին գերազանցում է այդ գործարքների կատարելու մասին որոշման օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության ½-ը/ կատարելուն համաձայնություն տալը:

6.4.23 դպրոցի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրության հաստատումը

6.4.24 դպրոցի ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի/ դպրոցի ներքին փաստաթղթեր/ հաստատումը

6.4.25 ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

6.4.26 դպրոցի հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

6.5 Դպրոցի ընթացիկ, կրթական, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում է հիմնադիրը՝ անժամկետ: Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Դպրոցի և դպրոցի տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը / այդ թվում օրենքով նախատեսված բոլոր հիմքերը/ այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

6.6 Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի դպրոցի հիմնադրի իրավասությանը վերաբերվող հարցերի: Տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ղեկավարում է դպրոցի գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների սույն կանոնադրության , աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6.7 Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով դպրոցին, հիմնադրին, պետությանը պատճառած վնասի համար, ընդ որում՝ տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

6.8 Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը / Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Ջերմուկի համայնքի ղեկավարը/ պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

6.9 Տնօրենի բացակայության դեպքում Հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում այլ անձ:

6.10 Դպրոցի տնօրենը պետք է գործի իր իրավասության սահմաններում:

6.10.1 առանց լիազորագրի գործում է դպրոցի անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների ու քաղաքացիների հետ հարաբերություններում ու միջազգային կազմակերպություններում:

6.10.2 տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

6.10.3 կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային

6.10.4 արձակում է հրամաններ սովորողների ընդունելության, նրանց՝ նույն դասարանում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու մասին

6.10.5 կազմակերպում է դպրոցի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը

6.10,6 տալիս է լիազորագրեր՝ այդ թվում վերալիզորման իրավունքով լիազորագրեր

6.10.7 բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ

6.10.8 սահմանում է դպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները

6.10.9 հաստատում է դպրոցի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, նշանակում և ազատում է նրանց ղեկավարներին

6.10.10 հաստատում է հաստիքներ

6.10.11 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

6.10.12 կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև

6.10.13 սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում դպրոցի աշխատակիցներին

6.10.14 աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ

6.10.15 իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ ու հանձնարարություններ:

6.11 Դպրոցի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

6.12 Դպրոցի տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել դպրոցի, դպրոցի տնօրենի հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչ՝ աուդիտորի/ արտաքին աուդիտ/:

7. ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս դպրոցը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

8. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Դպրոցը հիմնադրի որոշմամբ կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

8.2 Դպրոցը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

8.3 Եթե լուծարվող դպրոցի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

8.4 Դպրոցն իրավունք ունի վերակազմավորվել 100 տոկոս համայնքային / Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Ջերմուկի համայնքի/ մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

8.5 Դպրոցի լուծարման դեպքում դպրոցի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը ուղղվում է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Ջերմուկի համայնքի բյուջե:

8.6 Դպրոցը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարեցված այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյաններում համապատասխան գրանցում կատարելու պահից:

Հավելված 1
Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի
Ապրիլի 28-ի N 18-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՎԵՍՏԻ N 1 ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» համայքնային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կրթական և մշակույթային կազմակերպություն:

1.2 Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

1.3 Դպրոցը գտնվում է Վայոց Ձոր մարզի Ջերմուկի համայնքի, Մյասնիկյան փողոց N 6 հասցեում:

1.4 Դպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն իր անունից ձեռք է բերում և իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Դպրոցն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.6 Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.7 Դպրոցն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.8 Դպրոցը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

1.9 Դպրոցում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

1.10 Դպրոցի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման /պետական գրանցման/ և դադարում է լուծարման ավարտի /լուծարման պետական գրանցման/ պահից:

1.11 Հայաստանի Հանրապետությունը և համայնքը պատասխանատվություն չեն կրում Դպրոցի պարտավորությունների համար: Դպրոցն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայասատանի Հանրապետության և համայնքի պարտավորությունների համար:

1.12 Դպրոցնի անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ «,Ջերմուկի համայնքի արվեստի N 1 դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

կրճատ՝ «Ջերմուկի ԱԴ-1» ՀՈԱԿ

2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Դպրոցի գործունեության առարկան և նպատակը երաժշտական կրթական, մշակույթային, համերգային, հրատարակչական բնույթի գործունեության իրականացումն է:

2.2 Երաժշտական կրթական, մշակույթային գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության, ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, պայմաններ ստեղծում ինքնակրթության և լրացուցիչ /նախասիրական, նախամասնագիտական/ կրթության պահանջմունքների բավարարման համար:

2.3 Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության և մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

2.4 Դպրոցը պատասխանատու է պետական չափորոշիչներին, հանրակրթական պետական ծրագրերին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

2.5 Դպրոցը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:

Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպման հիմնական ձևերն են անհատական և խմբային պարապմունքները՝ անհատական դասի տևողությունը՝ 45, խմբակայինը՝ 40 րոպե է, բացառիկ դեպքերում այն կարող է փոփոխվել Հիմնադրի կողմից:

2.6 Դպրոցում ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվում են ուսումնական պլանների , ուսումնական ծրագրերի և դասացուցակի հիման վրա:

Ուսումնական պլաններում առանձին առարկաներին հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի պետական տիպային ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:

2.7 Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Դպրոցը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում ՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ դպրոցը, բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա դպրոցը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով , որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պետական գրանցման պահից Դպրոցը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

3.2 Դպրոցը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.3 Դպրոցը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր /մասնակից/ միայն Հիմնադրի որոշմամբ:

3.4 Դպրոցն իրավունք ունի ստեղծել /Հիմնադրի որոշմամբ/ առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքներում:

3.5 Կառավարչական, սոցիալ- մշակույթային , կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Դպրոցը կարող է ստեղծել հիմնարկներ:

3.6 Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3.7 Դպրոցի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձիք չեն և գործում են Դպրոցի հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են դպրոցի լիազորագրերի հիման վրա:

3.8 Դպրոցն իրավունք ունի՝

3.8.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք , այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը:

3.8.2 Ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները , այդ թվում փոխառուի միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետության և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր:

3.8.3 Հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

3.8.4 Մեկ տարուց ոչ ավելի ժամկետով իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության:

3.8.5 Օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու:

3.8.6 Սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ , արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց /կամ/ ձեռնարկությունների , կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցված ծառայություններից , այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ:

3.8.7 Օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքից;

3.9 Դպրոցն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման;

3.10 Դպրոցը պարտավորվում է՝

3.10.1 օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություններ :

3.10.2 աշխատանքային պայմանագրեր կնքել դպրոցի աշխատակիցների հետ

3.10.3 պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար;

3.10.4 օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել դպրոցի սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները:

3.10.5 հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը

3.10.6 ապահովել դպրոցի փաստաթղթերի /դպրոցի կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի , դպրոցի ներքին փաստաթղթերի , առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների և կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի/ պահպանումը:

3.10.7 կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4.ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

4.1 Դպրոցի հիմնադիրն ունի դպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4.2 Դպրոցի հիմնադիրն իրավունք ունի ՝

4.2.1 հետ վերցնել իր կողմից դպրոցին ամրակցված իր գույքը /այդ թվում գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները/:

4.2.2 կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել դպրոցի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները:

4.2.3 վերահսկողություն իրականացնել դպրոցին ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ:

4.2.4 հայցով դիմել դատարան, օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքն անվավեր ճանաչելու նպատակով:

4.2.5 օգտվել օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3 Դպրոցի հիմնադիրը պարտավոր է՝

4.3.1 ապահովել դպրոցի բնականոն գործունեությունը

4.3.2 չհրապարակել դպրոցի գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ

4.3.3 կատարել դպրոցի նկատմամբ ստանձնած պարտավորությունները;

4.3.4 պահպանել սույն կանոնադրության դրույթները:

5. ԴՊՐՈՑԻ ԳՈՒՅՔԸ

5.1 Դպրոցը հանդիսանում է սեփականատեր՝

5.1.1 Դպրոցի հիմնադրի կողմից / հիմնադրման ժամանակ և հետագայում/ սեփականության իրավունքով հանձնված գույքի

5.1.2 դպրոցի գործունեության հետևանքով արտադրված արտադրանքի և ձեռք բերված գույքի

5.1.3 ստացված եկամուտների

5.1.4 ուսումնական վարձավճարի գումարներից ստացված միջոցների /որոնք կարող են օգտագործվել բացառապես որպես աշխատավարձ և կոմունալ ու տնտեսական այլ ծախսերի կատարման նպատակով/:

5.2 Դպրոցի սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք ՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների , որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց;

5.3 Դպրոցի գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու , իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու առանձնահատկությունները կապված գույքը դպրոցի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքով;

5.4 Դպրոցի հիմնադիրը դպրոցին սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ;

5.5 Դպրոցի հիմնադիրը կարող է դպրոցին անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք

5.6 Ամրացված գույքի օգտագործման արդյունքում դպրոցի ստացած եկամուտները դպրոցի սեփականությունն են;

5.7 Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են;

5.8 Դպրոցի գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով;

5.9 Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով և չափով հարկերը, տուրքերը, և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը դպրոցն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների /դպրոցի տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում՝ հիմնական միջոցների ձեռք բերում, դպրոցի աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռք բերում, գրականության ձեռք բերում, բրոշյուրների, գրքույկների, տեղեկագրերի հրապարակման կազմակերպում, պարգևատրումների, հավելավճարների, խրախուսման այլ միջոցներով դպրոցի աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացումն , աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացներին և այլն/:

6. ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1 Դպրոցի կառավարման մարմիններն են՝ դպրոցի հիմնադիրը և տնօրենը:

6.2 Դպրոցի կառավարման բարձրագույն մարմինը դպրոցի հիմնադիրն է, որն իրականացնում է դպրոցի ընդհանուր կառավարումն ու ունի դպրոցի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ օրենքով չնախատեսված դեպքերի:

6.3 Դպրոցի հիմնադիրը ապահովում է դպրոցի բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության կատարման անպատշաճ իրականացման համար:

6.4 Դպրոցի հիմնադրի իրավասությանն են պատկանում՝

6.4.1 դպրոցի կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը

6.4.2 դպրոցի կանոնադրության հաստատումը ՝ նոր խմբագրությամբ

6.4.3 դպրոցին սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը

6.4.4 դպրոցին ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի և կազմի հաստատումը

6.4.5 դպրոցի վերակազմակերպումը

6.4.6 դպրոցի լուծարումը

6.4.7 դպրոցի լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների հաստատումը

6.4.8 կազմակերպությունների հիմնադրումը

6.4.9 կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը

6.4.10 դպրոցի կառավարման համակարգի սահմանումը, դպրոցի տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը

6.4.11 դպրոցի գործունեության վերահսկողության իրականացումը

6.4.12 դպրոցի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ դպրոցի կողմից իրականացվող գործունեության տեսակների, նոր մասնագիտություններով կրթական ծրագրերի սահմանումը:

6.4.13 մասնագիտությունների և մասնագիտացումների անվանացանկերի հաստատումը

6.4.14 ըստ մասնագիտությունների՝ ուսումնական պլանների հաստատումը

6.4.15 դպրոցի աուդիտն իրականացնող անձի հաստատումը

6.4.16 աուդիտի իրականացման որոշումն ընդունելը

6.4.17 դպրոցի տարեկան ծախսերի, այդ թվում՝ անվճար ուսուցման ծախսերի, արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի հաստատումը

6.4.18 ինչպես անվճար, այնպես էլ վճարովի հիմունքներով ընդունելության տեղերի հաստատումը ըստ մասնագիտությունների

6.4.19 դպրոցի տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը:

6.4.20 դպրոցի շահույթի և վնասների օգտագործման կարգի մասին որոշման ընդունումը:

6.4.21 դպրոցի մասնաճյուղերի ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքների տարեկան արդյունքների հաստատումը:

6.4.22 դպրոցի գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքներ / որոնց արժեքը գործարքին փոխկապակցվաղ այլ գործարքների հետ միասին գերազանցում է այդ գործարքների կատարելու մասին որոշման օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության ½-ը/ կատարելուն համաձայնություն տալը:

6.4.23 դպրոցի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրության հաստատումը

6.4.24 դպրոցի ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի/ դպրոցի ներքին փաստաթղթեր/ հաստատումը

6.4.25 ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

6.4.26 դպրոցի հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

6.5 Դպրոցի ընթացիկ, կրթական, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին նշանակում է հիմնադիրը՝ անժամկետ: Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Դպրոցի և դպրոցի տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը / այդ թվում օրենքով նախատեսված բոլոր հիմքերը/ այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

6.6 Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի դպրոցի հիմնադրի իրավասությանը վերաբերվող հարցերի: Տնօրենը օրենքով, հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ղեկավարում է դպրոցի գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների սույն կանոնադրության , աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

6.7 Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով դպրոցին, հիմնադրին, պետությանը պատճառած վնասի համար, ընդ որում՝ տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառված վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

6.8 Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը / Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Ջերմուկի համայնքի ղեկավարը/ պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

6.9 Տնօրենի բացակայության դեպքում Հիմնադրի գրավոր որոշման համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում այլ անձ:

6.10 Դպրոցի տնօրենը պետք է գործի իր իրավասության սահմաններում:

6.10.1 առանց լիազորագրի գործում է դպրոցի անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների ու քաղաքացիների հետ հարաբերություններում ու միջազգային կազմակերպություններում:

6.10.2 տնօրինում է դպրոցի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

6.10.3 կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային

6.10.4 արձակում է հրամաններ սովորողների ընդունելության, նրանց՝ նույն դասարանում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու մասին

6.10.5 կազմակերպում է դպրոցի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը

6.10,6 տալիս է լիազորագրեր՝ այդ թվում վերալիզորման իրավունքով լիազորագրեր

6.10.7 բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ

6.10.8 սահմանում է դպրոցի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները

6.10.9 հաստատում է դպրոցի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունները, նշանակում և ազատում է նրանց ղեկավարներին

6.10.10 հաստատում է հաստիքներ

6.10.11 իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

6.10.12 կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև

6.10.13 սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում դպրոցի աշխատակիցներին

6.10.14 աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ

6.10.15 իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ ու հանձնարարություններ:

6.11 Դպրոցի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադիրը, հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

6.12 Դպրոցի տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը վերստուգելու համար Հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել դպրոցի, դպրոցի տնօրենի հետ գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչ՝ աուդիտորի/ արտաքին աուդիտ/:

7. ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս դպրոցը չունի մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

8. ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Դպրոցը հիմնադրի որոշմամբ կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
8.2 Դպրոցը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:
8.3 Եթե լուծարվող դպրոցի գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:
8.4 Դպրոցն իրավունք ունի վերակազմավորվել 100 տոկոս համայնքային / Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Ջերմուկի համայնքի/ մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:
8.5 Դպրոցի լուծարման դեպքում դպրոցի պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը ուղղվում է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձոր մարզի Ջերմուկի համայնքի բյուջե:
8.6 Դպրոցը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարեցված այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյաններում համապատասխան գրանցում կատարելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 19-Ն

«ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՊԱՆՈՒՂԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԸ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և նույն հոդվածի 5-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ ««Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-148-Ն օրենքի 4-րդ հոդվածին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. «Ջերմուկի քաղաքային համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկը անվանափոխել «Ջերմուկի համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի:

2.Հաստատել «Ջերմուկի համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկի կանոնադրությունը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել համայնքի ղեկավարին ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ղեկավարի 2011 թվականի հունվարի15-ի ««Ջերմուկի քաղաքային համայնքի ճոպանուղի» համայնքային բյուջետային հիմնարկ ստեղծելու և նրա կանոնադրությունը հաստատելու մասին» N 2-Ա որոշման 3-րդ կետը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			

Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված 1
Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի
Ապրիլի 28-ի N 19-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՊԱՆՈՒՂԻ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի «Ջերմուկի համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հիմնարկ է (այսուհետ՝ հիմնարկ):

1.2 Հիմնարկի հիմնադիրը Ջերմուկի համայնքն է, որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ավագանին (այսուհետ՝ հիմնադիր):

1.3 Հիմնարկը տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավունքով ունի առանձնացված ու իրեն ամրացված գույք: Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ենթաօրենսդրական ակտերով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ:

1.4 Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատու է հիմնադիրը: Հիմնարկը հիմնադրի համաձայնությամբ իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.5 Հիմնարկի իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.6 Հիմնարկն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր հայերեն անվամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.7 Հիմնարկն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

1.8 Հիմնարկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմնադրի համաձայնությամբ կարող է համագործակցել օտարերկրյա նմանատիպ կազմակերպությունների և հաստատությունների հետ:

1.9 Հիմնարկը հաշվետու է հիմնադրին:

1.10 Հիմնարկի անվանումն է՝

հայերեն լրիվ «Ջերմուկի համայնքի ճոպանուղի» համայնքային հիմնարկ

կրճատ՝ «Ջերմուկի համայնքի ճոպանուղի» ՀՀ

1.11 Հիմնարկի գտնվելու վայրն է՝ Ջերմուկի համայնք, Երևանյան խճուղի N 1:

2. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Հիմնարկի ստեղծման նպատակն է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքում ձմեռային սպորտաձևերի և տուրիզմի զարգացումը և հանգստի կազմակերպումը:

2.2 Հիմնարկի գործունեությունը հիմնվում է մարդասիրության, հանրամատչելիության, ազգային ու համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման և ինքնավարության սկզբունքների վրա:

2.3 Իր առջև դրված խնդիրների իրականացման համար հիմնարկը կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի և բազմակողմանի կապերայլ կազմակերպությունների, իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ:

2.4 Հիմնարկը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:

2.5 Հիմնարկը պատասխանատու է պետական չափորոշիչներին:

3. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

3.1 Հիմնարկի կառավարումն իրականացնում են հիմնադիրը և նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ հիմնարկի տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

3.2 Հիմնարկի հիմնադիրն ունի հիմնարկի գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

3.3 Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա/ հիմնարկի հիմնադրումը

բ/ հիմնարկի գործունեության առարկայի և նպատակների սահմանումը

գ/ հիմնարկին օգտագործման ու տնօրինման իրավունքով ամրացվող՝ հիմնադրին պատկանող գույքի կազմի հաստատումը

դ/ հիմնարկի կանոնադրության ստեղծումն ու հաստատումը, դրանում փոփոխությունների կատարումը

ե/ հիմնարկի վերակազմակերպումը և լուծարումը

զ/ հիմնարկի լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը

է/ հաստատում է հիմնարկի տարեկան հաշվետվությունները և հաշվեկշիռը

ը/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը

3.4 Համայնքի ղեկավարը՝

ա/ իրականացնում է հիմնարկի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար

բ/ վերահսկողություն է իրականացնում հիմնարկի գործունեության նկատմամբ

գ/ կասեցնուկ կամ ուժը կորցրած է ճանաչում հիմնարկի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները

դ/ լսում է հիմնարկի գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները

ե/ վերահսկողություն է իրականացնում հիմնարկին ամրացված համայնքային սեփականության գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ

զ/ հիմնադրի որոշմամբ՝ հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար

է/ իրականացնում է օրենքով և հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ

3.5 Հիմնարկի տնօրենը՝

ա/ իրականացնում է հիմնարկի ընթացիկ գործունեության ղեկավարումը
բ/ օրենքներով, հիմնադրի, համայնքի ղեկավարի, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հիմնարկի գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար
գ/ առանց լիազորագրի հանդես է գալիս հիմնարկի անունից, ներկայացնում է նրա շահերը, կնքում է գործարքներ
դ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի ու համայնքի ղեկավարի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է հիմնարկի գույքը և ֆինանսական միջոցները
ե/ տալիս է հիմնարկի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր
զ/ օրենքով սահմանված կարգով աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում է հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր
է/ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը
ը/ կազմում է տարեկան ծախսերի նախահաշիվը և այն ներկայացնում հիմնադրի հաստատմանը
թ/ սահմանում է հիմնարկի աշխատանքային ռեժիմը

3.6 Տնօրենի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի գրավոր կարգադրությամբ տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

4. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Հիմնարկի գույքը ձևավորվում է հիմնարկի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից տնօրինման իրավունքով նրան ամրացվող, ինչպես նաև հիմնարկի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

4.2 Հիմնարկի լուծարումից հետո մնացած գույքը համայնքի սեփականությունն է:

4.3 Հիմնարկի գույքի պահպանման հոգսը կրում է հիմնարկ

4.4 Հիմնարկի գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4.5 Հիմնադիրն իրավունք ունի վերցնելու իր կողմից հիմնարկին ամրացված գույքը, եթե այն չի օգտագործվում ըստ նշանակության:

4.6 Հիմնարկն իրավունք չունի առանց համայնքի ղեկավարի գրավոր համաձայնությանիրեն ամրակցված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Հիմնարկն իրավունք ունի իրեն ամրակցված գույքը համայնքի ղեկավարի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ

ավագանու որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:Ամրացված գույքի օգտագործման արդյունքում հիմնարկի ստացած եկամուտները հիմնարկի սեփականությունն են: Հիմնարկին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները համայնքի սեփականությունն են: Հիմնարկի լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

4.7 Հիմնարկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:

4.8 Հիմնարկը ֆինանսավորում է հիմնադիրը: Հիմնարկի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքային բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից՝ բարեգործական նպատակային ներդրումներ, նվիրատվություններ և այլն:

5. ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

Հիմնարկը վերակազմակերպվում և (կամ) լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 20-Ն

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի վերջին պարբերությամբ՝ ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-149 օրենքի 2-րդ հոդվածին համապատասխան՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի փետրվարի 3-ի N 71-Ա հրամանը ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Ջերմուկի համայնքին ղեկավարին ուժը կորցրած ճանաչել Ջերմուկի համայնքի ղեկավարի 2009 թվականի սեպտեմբերի 10-ի «Ջերմուկի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժնի կանոնադրությունը հաստատելու մասին» N 71-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		

Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված
Ջերմուկի համայնքի ավագանու
2016 թվականի ապրիլի 28 -ի թիվ 20-Ն որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ջերմուկի տարածքային բաժինը, աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է (այսուհետ՝ բաժին), որը «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթներ:

2. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով՝ համայնքի ավագանու որոշմամբ: Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն, որը հաստատում է համայնքի ավագանին:

3. Բաժնի լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

4. Բաժինը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան:

5. Բաժինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և բաժնի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

II. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
2) տարածքային բաժնի արխիվի վարումը.
3) կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը.
4) օրենքով նախատեսված այլ նպատակներ և խնդիրներ:

III. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Բաժինն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի հետևյալ պետական գրանցումները՝
ա. ծնունդը.
բ. ամուսնությունը.
գ. ամուսնալուծությունը.
դ. որդեգրումը.
ե. հայրություն որոշելը.
զ. անվան փոխումը.
է. մահը,
2) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ,
3) իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումը,
4) իրականացնում է օրենքով նախատեսված այլ գործառույթներ:

IV. ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժնի գործունեությունը կազմակերպում է այն համայնքի ղեկավարը, որտեղ գտնվում է համապատասխան բաժինը:

9. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:

10. Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրառումները կազմելու որակի համար պատասխանատու է բաժնի պետը և գրանցում կատարող աշխատողը:

11. Բաժնի պետը՝

1) իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև այլ իրավական ակտերով.
2) կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ կատարումը.
3) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
4) կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
5) բաժնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.
6) իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.
7) ուսումնասիրում է բաժնի աշխատողների գործունեության դեմ ուղղված բողոքները.

8) քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.
9) ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.
10) իրականացնում է հսկողություն տարածքային բաժնի ծառայողների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, պաշտոնական պարտականությունների ժամանակին և օրենքի պահանջներին համապատասխան կատարման նկատմամբ.
11) վարում է համապատասխան տարածքային բաժնի արխիվը.
12) օրենքով սահմանված կարգով համապատասխան մարմիններին տրամադրում է տեղեկատվություն կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ.
13) աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում բաժնի համայնքային ծառայողների նկատմամբ խրախուսանքի և կարգապահական տույժերի միջոցներ կիրառելու մասին առաջարկություններ.
14) համայնքի ղեկավարին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնում է հաշվետվություն բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ.
15) պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների լուծման համար.
16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

12. Բաժնի աշխատողը՝

1) բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ, վկայականների, տեղեկանքների, ակտային պատճենների և այլ փաստաթղթերի տրամադրման գործավարություն.
2) իր լիազորությունների շրջանակներում վարում է բաժնի արխիվը.
3) կատարում է բաժնի պետի ցուցումները և հանձնարարականները.
4) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի պահպանության և արխիվացման աշխատանքները.
5) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում է բաժնի պետին.
6) ստորագրում է իր կողմից պատրաստվող փաստաթղթերը.
7) բաժնի պետի հանձնարարությամբ իրականացնում է բաժնի փաստաթղթային սպասարկումը, ապահովում է փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները.
8) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է բաժնի աշխատանքային ծրագրերի մշակման աշխատանքներին.
9) իր լիազորությունների շրջանակներում, ինչպես նաև բաժնի պետի հանձնարարությամբ, նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ.
10) իրականացնում է օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 21-Ն

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 43-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, 52-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել՝

ա/ Ջերմուկի համայնքի ղեկավարի 2016 թվականի ապրիլի 25-ի ««Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» N 43-Ա որոշումը՝ համաձայն հավելված 1-ի.

բ/ «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			

Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

Հավելված 1
Ջերմուկի համայնքի ավագանու
2016 թվականի ապրիլի 28-ի N 21-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ապրիլի 2016թ. N 43-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի

ո ր ո շ ում եմ՝

1.Հիմնադրման միջոցով ստեղծել «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

2.Սահմանել, որ կազմակերպության գործունեության առարկան և նպատակներն են՝

ա/ Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկումը

բ/ համայնքում կանաչապատման, աղբահանության և սանիտարական մաքրման, բարեկարգման աշխատանքների, աբոնենտային վճարների գանձման կազմակերպումն ու իրականացումը

գ/ բնակչության կենսաապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող ծառայությունների իրականացումը

դ/ արտաքին լուսավորության և անձրևաջրատար ցանցերի ընթացիկ նորոգումը, պահպանումը, շահագործումը:

3.Կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել գույք՝ համաձայն հավելվածի:

4.Ջերմուկի համայնքի ավագանու համաձայնությանը ներկայացնել Ջերմուկի բնակիչ Պավլիկ Մենալավի Հարությունյանի թեկնածությունը «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակվելու համար:

5. Կազմակերպությանը անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել Ջերմուկի համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Ջերմուկի համայնքապետարանի՝ Մյասնիկյան փողոցի N 8 հասցեում գտնվող, շենքի 2-րդ հարկում գտնվող 40 քմ մակերեսով տարածքը:

6. Ի կատարումն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջի՝սույն որոշումը ներկայացնել Ջերմուկի համայնքի ավագանու հաստատմանը: :

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն հաստատելու մասին Ջերմուկի համայնքի ավագանու որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2016 ապրիլի 25
Ջերմուկ

Ջերմուկ համայնքի ղեկավարի 2016 թվականի
ապրիլի 25-ի N 43-Ա որոշման

Ց Ա Ն Կ

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ

հ/հ	Հիմնական միջոցի անվանումը	միավորի արժեք	քանակ	ընդամենը հիմնական միջոցներ	ձեռք բերման տարեթիվը	մաշված. տարեկան %	ընդամենը մաշվածություն	հիմնական միջոցի մնացորդային արժեք
1	բենզինի շարժիչով գերանդի	100000	1	100000	2011	13	61000	39000
2	թրթուրավոր տրակտոր	1890000	1	1890000	2011	13	1228500	661500
3	տրակտոր Բոլատուս	15415000	1	15415000	2011	13	10019750	5395250
4	գազոնակասիլկա 6010	315000	1	315000	2012	13	154350	160650
5	խոտհնձիչ	284000	1	284000	2012	13	139160	144840
6	Ան տրակտոր U-40	1187500	1	1187500	2009	13	1080625	106875
7	ԴՏ-75 ռոտոր	3910700	1	3910700	2009	13	3558737	351963
8	Գազ-53-ԿՕ-413	3008200	1	3008200	2009	13	3034462	-26262
9	Գազ-53-ԿՕ-309	633300	1	633300	2009	13	576303	56997
10	ԿՕ-713/ԶԻԼ-43-14-12/	3610000	1	3610000	2009	13	3285100	324900
11	25-12ՆԿ մուլտիկար	126700	1	126700	2009	13	115297	11403
12	Գազ-53-14-ԿՕ-413	3008200	1	3008200	2009	13	2737462	270738
13	Գազ-53-ԿՕ-503բ	380000	1	380000	2009	13	345800	34200
14	Գրեյդեր-ԴԶ-143	21793500	1	21793500	2009	13	19832085	1961415
15	ԴՏ-75	3309000	1	3309000	2009	13	3011190	297810
16	Ավազ ցրող Գազ-53	633000	1	633000	2009	13	576030	56970
17	Ձյուն բարձող	50800	1	50800	2009	13	46228	4572
18	Մեքենա ԶԻԼ -130	2176200	1	2176200	2005	13	2176200	0
19	տրակտոր- SAKE-603	2020000	1	2020000	2007	13	2020000	0
20	ԶԻԼ աղբատար մեքենա	13181000	1	13181000	2008	13	12785570	395430
21	ձյուն մաքրող ձեռքի տրակտորներ HONDA HS 970K1	1066000	2	2132001	2014	13	454827,13	1677173,87
	ԸՆԴԱՄԵՆԸ	***78098100***	***22***	***79164101***			***67238676,13***	***11925424,87***
1	կանաչ մեծ աղբարկղներ	32199,6	28	901588,8	2011	8	561561,024	340027,776
2	աղբարկղներ	42857	118	5057126	2011	8	2269718,88	2787407,12
3	աղբամաններ սև մետաղից փոքր	194062	13	2522806	2012	8	807299,12	1715506,88
4	բետոնյա աղբամաններ 9.1	35000	6	210000	2009	8	117600	92400
5	աղբարկղներ մեծ մետաղյա	67742	31	2100002	2006	8	1680000,16	420001,84
6	կանաչ աղբարկղներ միջին	68611	34	2332774	2006	8	1965021,92	367752,08

7	դեղին- կապույտ երկաթյա աղբարկղներ	69720	6	418320	2008	8	418320	0
8	բետոնյա աղբաման 9.2	31920	2	63840	2014	8	7022,4	56817,6
	ԸՆԴԱՄԵՆԸ	***542111,6***	***238***	***13606456,8***			***7826543,504***	***5779913,296***
1	դեղին - կանաչ նստարաններ	81400	35	2849000	2011	8	1139600	1709400
2	ցանկապատեր	20500	217	4448500	2011	7,5	1223337,5	3225162,5
3	նստարաններ սև մետաղից՝ փայտյա նստատեղով	187471	16	2999536	2012	8	959853,92	2039682,08
4	ծաղկամանի տակդիր	28000	1	28000	2009	8	15680	12320
5	ծաղկամաններ 8.9	9000	10	90000	2009	8	50400	39600
6	ծաղկամաններ 8.8	45000	6	270000	2009	8	151200	118800
7	ծաղկամաններ 8.15	46000	8	368000	2009	8	206080	161920
8	ծաղկամաններ 8.18	45000	6	270000	2009	8	151200	118800
9	բետոնյա ոտնակներով նստարաններ 10.2	63000	8	504000	2009	8	141120	362880
10	լոռենյա ոտնակներով նստարաններ 10.2	65000	14	910000	2012	8	218400	691600
11	ծաղկամաններ 8.5	45000	29	1305000	2012	8	313200	991800
	ԸՆԴԱՄԵՆԸ	***635371***	***350***	***14042036***			***4570071,42***	***9471964,58***
1	եռաչափ կոնային եղևնի H=9.2m	3139339	1	3139339	2012	12	1506882,72	1632456,28
2	ձերման հյուսիսային եղջերու	350016	2	700032	2012	12	336015,36	364016,64
3	սահնակ սպիտակ մակերեսով H=1.5m	949012	1	949012	2012	12	455525,76	493486,24
4	եռաչափ տոնածառի գնդեր՝ լուսային դիոդ 2538 կոդ սս	93841	1	93841	2012	12	45043,68	48797,32
5	եռաչափ տոնածառի գնդեր՝ լուսային դիոդ 2540 կոդ սս	178992	1	178992	2012	12	85916,16	93075,84
6	եռաչափ տոնածառի գնդեր՝ լուսային դիոդ 2530 կոդ սս	93841	1	93841	2012	12	45043,68	48797,32
7	նվերների տուփ 55սմ դեղին լուս. Դիոդներով	83010	1	83010	2012	12	39844,8	43165,2
8	նվերների տուփ 55սմ կարմիր լուս. դիոդներով	83010	1	83010	2012	12	39844,8	43165,2
9	նվերների տուփ 70 սմ դեղին լուս. դիոդներով	137138	1	137138	2012	12	65826,24	71311,76
10	դիոդների համար սպիտակ ցանց-վարագույր	81067,9	10	810679	2012	12	389125,92	421553,08
11	ամանորյա խաղալիքներ, ֆիգուրներ	154471	13	2008123	2012	12	963899,04	1044223,96
12	մեծ չափի սայլակ	1421686	1	1421686	2012	12	682409,28	739276,72
13	աստղա - խաղալիք	489060	2	978120	2014	12	146718,4	831401,6
14	տնակ -խաղալիք	551760	1	551760	2014	12	82764	468996
15	ճոճանակ IV	94620	2	189240	2014	12	28386	160854
16	շղթաներով փոքր ճոճանակ	150480	2	300960	2014	12	45144	255816
17	փոքր մարգիկ	100320	2	200640	2014	12	30096	170544
	ԸՆԴԱՄԵՆԸ	***8151663,9***	***43***	***11919423***			***4988485,84***	***6930937,16***
1	պլ. լուսատուներ լամպերով SGS 102 SON T 150 W	80000	120	9600000	2012	50	9600000	0
2	պլ. լուսատուներ լամպերով SGS 102 SON T 250 W	80000	170	13600000	2012	50	13600000	0
3	ալյումինե լուսատուներ	413023,3125	16	6608373	2012	50	4295442,45	2312930,55
4	ալյումինե լուսատուներ	982761,0833	12	11793133	2012	50	7665536,45	4127596,55
5	ալյումինե լուսատուներ	553626,9016	61	33771241	2012	50	21951306,65	11819934,35
6	ալյումինե լուսատուներ	2544780	4	10179120	2012	50	6616428	3562692
7	ալյումինե լուսատուներ	413023,2917	48	19825118	2012	50	12886326,7	6938791,3

8	այլումինե ձողեր ցանկապատի համար	148659,1	40	5946364	2012	50	3865136,6	2081227,4
9	էլեկտրական ժամացույց	4220307	1	4220307	2012	50	2743199,55	1477107,45
10	լուսավորության դեկավարման արկղ	390000	3	1170000	2012	50	1006200	163800
11	եռաֆազ հաշվիչ	115000	2	230000	2012	50	197800	32200
12	եռաֆազ հաշվիչ	102000	5	510000	2012	50	438600	71400
13	եռաֆազ հաշվիչ	85000	1	85000	2012	50	73100	11900
14	մեկ տեղանոց արկղ եռաֆազ հաշվիչի համար	110000	1	110000	2012	50	94600	15400
15	մետաղական լուսավորության հենապուներ	222703,0099	101	22493004	2012	7,5	5060925,9	17432078,1
16	պողպատե հենարանի գիլզա	57564	101	5813964	2012	7,5	1308141,9	4505822,1
17	լոգացող բեմահարթակ	2160000	1	2160000	2009	7,5	1198800	961200
18	ճանապարհային նշաններ	36844	27	994788	2007	12	994788	0
19	քաղաք. այգու հուշարձան	1135000	1	1135000	2006	7,5	595875	539125
	ԸՆԴԱՄԵՆԸ	***13850291,7***	***715***	***150245412***			***94192207,2***	***56053204,8***
	ԸՆԴԱՆՈՒՐԸ ՀՄ	***101277538,2***	***1368***	***268977429***			***178815984,1***	***90161444,71***
	ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ ԸՍՏ 31.12.2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ							
1	կանաչ երկաթյա փոքր աղբարկղներ	14900	36	536400	2005	8	472032	64368
2	MASTER SON PIA Pluz 150W '871150018228915	11474	61	699914	2012	50	699914	0
3	MASTER SON PIA Pluz 250W '871150019344515	15631	7	109417	2012	50	109417	0
4	MASTER City White CDO=TT 150W	27177	94	2554638	2012	50	2554638	0
5	տոնածառի խաղալիք 15սմ կարմիր գույն	1952	96	187392	2012	50	187392	0
6	տոնածառի խաղալիք 15 սմ ոսկեգույն	1952	92	179584	2012	50	179584	0
7	դեկորատիվ պարագաներ	17244	14	241416	2012	50	241416	0
8	շղթաներ սև մետաղից	8788	36	316368	2012	7,5	71182,8	245185,2
9	այլումինե սյուներ դրոշակների համար	6000	300	1800000	2012	7,5	405000	1395000
10	դրոշակներ	3640	250	910000	2012	8	218400	691600
11	դրոշակների համար այլումինե սյուներ	1513	1720	2602360	2012	7,5	585531	2016829
12	պողպատե հենապուներ ձախ. Բակային ցանց	12000	66	792000	2012	7,5	178200	613800
13	ծաղկամաններ 8.18	10000	11	110000	2012	8	26400	83600
14	ծաղկամանի տակդիր	3000	29	87000	2012	8	20880	66120
15	սալիկներ	12000	500	6000000	2012	7,5	1350000	4650000
16	սյուներ	8500	170	1445000	2012	7,5	325125	1119875
17	սյուներ	4300	70	301000	2012	7,5	67725	233275
18	մետաղական դարպասներ	25000	24	600000	2012	7,5	135000	465000
19	փոքր աղբարկղներ	9721	12	116652	2012	8	27996,48	88655,52
20	դռել	14000	1	14000	2012	50	14000	0
	ԸՆԴԱՄԵՆԸ	***208792***	***3589***	***19603141***			***7869833,28***	***11733307,72***

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻՊԵՏ ***ԱՐՄԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ***

Հավելված 2
Ջերմուկի համայնքի ավագանու 2016 թվականի
ապրիլի 28-ի N 21-Ն որոշման

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում » համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (հետագայում՝ Կազմակերպություն) համարվում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն:

Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ավագանին է (այսուհետ՝ Հիմնադիր), որի անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ղեկավարը:

Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ղեկավարի՝ 25.04.2016թ. թիվ 43-Ա և Ջերմուկի համայնքի ավագանու՝ 28.04.2016թ. թիվ 21-Ա որոշումների համաձայն:

1.2 Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման պետական գրանցման) պահից:

1.3 Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը և իր անվանումը (հայերեն և ռուսերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.4 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.6 Կազմակերպությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Կազմակերպությունն պատասխանատվություն չի կրում հիմնադիր պարտավորությունների համար:

1.7 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Կազմակերպության պարտավորությունների համար: Կազմակերպությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.8 Կազմակերպության անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

կրճատ՝«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ

1.9 Կազմակերպության գտնվելու վայրը, փոստային հասցեն՝ 3702, Հայաստանի Հանրապետություն, Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք, Մյասնիկյան փողոց N 8:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1 Կազմակերպության ստեղծման նպատակն է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի բարեկարգումը:

2.2 Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակներն են՝

- Ջերմուկի համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրների լուծման նպատակով մատուցվող ծառայությունների իրականացումը,
- Կանաչապատման, աղբահանության և սանիտարական մաքրման, բարեկարգման աշխատանքների իրականացում, աբոնենտային վճարների գանձման կազմակերպում, թափառող կենդանիների ոչնչացման ծառայությունների իրականացում:
- Արտաքին լուսավորության և անձրևաջրատար ցանցերի ընթացիկ նորոգում, պահպանում, շահագործում.
- Օրենքով սահմանված այլ տնտեսական գործունեության իրականացում:

2.3 Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար Կազմակերպությունը՝

- իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների գիտական հիմնարկների, այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ,
- պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների կամ անհատների,
- կատարում է տարատեսակ աշխատանքներ կադրերի պատրաստման, մասնագետների փոխանակման և այլ բնագավառներում,

2.4 Կազմակերպությունը կարող է իրականացնել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված գործունեության տեսակներ:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Կազմակերպությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Կազմակերպությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պետական գրանցման պահից Կազմակերպությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր

պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռքբերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող; Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա բանկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ (ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ տարադրամով):

3.2 Կազմակերպությունը կարող է լինել այլ կազմակերպության հիմնադիր (մասնակից) միայն հիմնադրի որոշմամբ:

3.3 Կազմակերպությունն իրավունք ունի ստեղծել (հիմնադրի որոշմամբ) առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-տնտեսական, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Կազմակերպությունը կարող է ստեղծել հիմնարկներ:

Օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների ստեղծումն իրականացվում է տվյալ երկրի օրենքներին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Կազմակերպության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Կազմակերպության լիազորագրերի հիման վրա:

3.4 Կազմակերպությունն իրավունք ունի.

-Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամայլօգտակարարդյունքը,

- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում՝ փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,

-հիմնադրի որոշումների կամ սույն կանոնադրության համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, մեկ տարուց ոչ ավելի ժամկետով՝ իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնել վարձակալության,

- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,

-օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,

- օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5 Կազմակերպությունն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր

իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

3.6 Կազմակերպությունը պարտավոր է.

- օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում ու ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Կազմակերպության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Կազմակերպության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները, հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը,
- ապահովել Կազմակերպության փաստաթղթերի (Կազմակերպության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Կազմակերպության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, տնօրենի հրամանների, հրահանգների ու կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը:
- Կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

4.1 Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

4.2 Կազմակերպության հիմնադիրն իրավունք ունի՝

- հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը (այդ թվում՝ գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները),
- կասեցնել կամ ուժը կորցրած ճանաչել Կազմակերպության տնօրենի Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,
- վերահսկողություն իրականացնել Կազմակերպությանն ամրացված համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,
- հայցով դիմել դատարան՝ Օրենքի կամ սույն կանոնադրության պահանջների խախտմամբ կատարված խոշոր գործարքը անվավեր ճանաչելու նպատակով, օգտվել Օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3 Կազմակերպության հիմնադիրը պարտավոր է՝

- ապահովել Կազմակերպության բնականոն գործունեությունը,
- չհրապարակել Կազմակերպության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ,
- կատարել Կազմակերպության նկատմամբ ստանձնած պարտավորությունները,
- պահպանել սույն կանոնադրության դրույթները:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է սեփականատեր՝

- Կազմակերպության հիմնադրի կողմից (հիմնադրման ժամանակ և հետագայում) սեփականության իրավունքով հանձնված գույքի,
- Կազմակերպության գործունեության հետևանքով ձեռքբերված գույքի,

Կազմակերպության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Կազմակերպության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը կազմակերպության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն դրամով:

5.2 Կազմակերպության հիմնադիրը Կազմակերպությանն սեփականության իրավունքով պատկանող նկատմամբ չունի իրավունքներ:

5.3 Կազմակերպության հիմնադիրը կարող է Կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները Կազմակերպության սեփականությունն են: Ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

5.4 Կազմակերպության գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

5.5 Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար սահմանված կարգով ու չափով հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները կատարելուց հետո մնացած, սահմանված կարգով առաջացած մաքուր շահույթը Կազմակերպությունն օգտագործում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների (Կազմակերպության տեխնիկական հագեցվածության բարելավում, այդ թվում հիմնական միջոցների ձեռքբերման ճանապարհով, Կազմակերպության աշխատանքային գործունեությունը ապահովող գույքի և նյութերի ձեռքբերում, պարգևատրումների, հավելավճարների և խրախուսման այլ միջոցներով Կազմակերպության աշխատակիցների սոցիալական պաշտպանվածության բարձրացում, աշխատակիցների որակավորման բարձրացման նպատակով դասընթացների կազմակերպում կամ մասնակցություն կազմակերպված դասընթացներին և այլն) իրականացման համար:

Կազմակերպության շահույթի օգտագործման կարգը սահմանում է Հիմնադիրը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

6.1 Կազմակերպության կառավարման մարմիններն են Կազմակերպության հիմնադիրը՝ ի դեմս համայնքի ղեկավարի և կազմակերպության տնօրենը:

6.2 Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմինը համայնքի ղեկավարն է, ով իրականացնում է Կազմակերպության ընդհանուր կառավարումը և ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերվող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Համայնքի ղեկավարը ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և

պատասխանատվություն է կրում սույն կանոնադրությամբ սահմանված գործունեության չկատարման կամ անպատշաճ իրականացման համար:

6.3 Կազմակերպության հիմնադրի՝ համայնքի ավագանու, իրավասությանն են պատկանում՝

1.Կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Կազմակերպության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,

2. Կազմակերպությանն սեփականության իրավունքով հանձնվող գույքի կազմի հաստատումը,

3. Կազմակերպությանն ամրացվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կազմի հաստատումը,

4. Կազմակերպության վերակազմակերպումը,

5. Կազմակերպության լուծարումը,

6. Կազմակերպության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը,

7. Կազմակերպությունների հիմնադրումը,

8. Կազմակերպություններում մասնակցության մասին որոշումների ընդունումը,

9. Կազմակերպության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ (որոնց արժեքը, գործարքին փոխկապակցված այլ գործարքների հետ միասին գերազանցում է այդ գործարքների կատարելու մասին որոշման ընդունման օրվանը նախորդող եռամսյակի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների մեծության 1/2-ը) կատարելուն համաձայնությունը տալը,

10. Կազմակերպության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը,

11. Կազմակերպության ղեկավար պաշտոնատար անձանց աշխատանքի վարձատրման պայմանների որոշումը:

Կազմակերպության Հիմնադիրն իրավունք ունի որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված ցանկացած այլ հարցի շուրջ:

6.4 Համայնքի ղեկավարի իրավասությանն են պատկանում՝

1. Կազմակերպության տնօրենի նշանակումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
2. Կազմակերպության գործունեության վերահսկողության իրականացումը,
3. Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ Կազմակերպության կողմից իրականացվող գործունեության տեսակների և ծրագրերի սահմանումը,
4. Կազմակերպության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
5. Աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,
6. Կազմակերպության տարեկան ծախսերի, այդ թվում՝ արտաբյուջետային եկամուտների և ծախսերի նախահաշվի կազմումը,
7. Կազմակերպության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկռի՝ համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնելը,
8. Կազմակերպության, նրա մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը,
9. Կազմակերպության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Կազմակերպության ներքին փաստաթղթեր) հաստատումը,

6.5 Կազմակերպության ընթացիկ, արտադրատնտեսական, ֆինանսական և այլ գործունեության ղեկավարումը իրականացնում է տնօրենը, որին նշանակում և ազատում է Համայնքի ղեկավարը՝ համայնքի ավագանու համաձայնությամբ: Տնօրեն կարող է նշանակվել բարձրագույն կրթություն ունեցող, Հայաստանի Հանրապետության գործունակ ցանկացած քաղաքացի, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպության և Կազմակերպության տնօրենի միջև աշխատանքային պայմանագիրը հիմնադրի անունից ստորագրվում է համայնքի ղեկավարի կողմից: Պայմանագրում սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, փոխհարաբերությունները Հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման հիմքերը (այդ թվում՝ Օրենքով նախատեսված բոլոր հիմքերը), այլ դրույթներ, որոնք կողմերը կգտնեն անհրաժեշտ:

Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Կազմակերպության Հիմնադրի իրավասությանը վերաբերվող հարցերի: Տնօրենը օրենքով, Հիմնադրի որոշումներով, աշխատանքային պայմանագրով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, Հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության, աշխատանքային պայմանագրի պահանջները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով Կազմակերպությանն, Հիմնադրին, պետությանը պատճառված վնասի համար, ընդ որում՝ տնօրենի լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելուհամար:

Հիմնադրի անունից հանդես եկող պաշտոնատար անձը (Հայաստանի Հանարպետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի ղեկավարը) պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել վերը նշված վնասի փոխհատուցման հարցը, հակառակ դեպքում՝ նա կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

Տնօրենի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի գրավոր կարգադրության համաձայն՝ տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

6.6 Կազմակերպության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Կազմակերպության:

Կազմակերպության *տնօրենը* իր իրավասության սահմաններում՝

1. առանց լիազորագրի գործում է Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը պետության, նրա մարմինների, այլ կազմակերպությունների և քաղաքացիների հետ հարաբերություններում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում,
2. տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,
3. կնքում է պայմանագրեր, այդ թվում՝աշխատանքային,
4. կազմակերպում է Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքը՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,
5. տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,
6. բանկում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,
7. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
8. կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,
9. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում

Կազմակերպության աշխատակիցներին,

10. Աշխատակցի նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

11. իրականացնում է օրենքով, Հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Հիմնադրի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ:

6.7 Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են Հիմնադրի կողմից լիազորված անձը, օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ: Կազմակերպության տարեկան ֆինանսական հավետվության հավաստիությունը վերստուգելու համար Հիմնադիրն իրավունք ունի ամեն տարի ներգրավել Կազմակերպության, Կազմակերպության տնօրենի, գույքային շահերով չկապված արհեստավարժ վերստուգիչ՝ աուդիտորի (արտաքին աուդիտ):

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Կազմակերպությունը չունի ճյուղեր և ներկայացուցչություններ:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը, նրա Հիմնադրի որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Կազմակերպությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով դեպքերում և կարգով:

Եթե լուծարվող Կազմակերպության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

8.2 Կազմակերպությունն իրավունք ունի վերակազմավորվել հարյուր տոկոս համայնքային (Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի) մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:

8.3 Կազմակերպության լուծարման դեպքում Կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքի բյուջե:

8.4 Կազմակերպությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ապրիլի 2016թ. N 22-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնություն տալ «Ջերմուկի համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում նշանակելու համար Ջերմուկի համայնքի ղեկավարի ներկայացրած՝ Պավլիկ Մենալավի Հարությունյանի թեկնածությանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7..... դեմ-...0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 23-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 32-րդ հոդվածի 13/1 կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 29-ի «Ճանապարհային երթևեկության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 1206-Ն որոշման հավելվածի 6-րդ կետի «գ», 7-րդ կետի «զ» ենթակետերով և 19-րդ կետով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1.Վերակազմակերպել Ջերմուկի համայնքի Մյասնիկյան փողոցով (այսուհետ՝ փողոց) տրանսպորտային միջոցներով երթևեկությունը հետևյալ սխեմայով՝

ա/ փողոցը իր սկզբնամասից մինչև Շահումյան փողոցի հետ խաչվելը (խաչմերուկը) դարձնել երկկողմանի երթևեկելի:

բ/ հետիոտների անխափան ու անվտանգ երթևեկությանը նպաստելու համար փողոցի վերջնամասը՝ «Արմենիա» առողջարանի մուտքի մոտակայքից սկսվող և դեպի ըմպելասրահը երկարաձգվող հատվածը փակել՝ երթևեկությունը թույլատրելով միայն ծառայողական ավտոմեքենաներին:

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը ապահովել ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցների ներդնումը փողոցում, ինչպես նաև՝ հսկողություն սահմանել փողոցով երթևեկության կազմակերպման, տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքների համար նախատեսված պահանջների պահպանման, ինչպես նաև ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցները տեխնիկական նորմերի, կանոնների և ստանդարտների պահանջներին համապատասխանեցնելու նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			

Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....6..... դեմ-.....1..... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 24-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հավանություն տալ Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող 10-002-0457-0055 ծածկագրով 200 քմ գյուղատնտեսական նշանակության հողամասի (արոտ) նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության՝ կապի գործառնական նշանակությամբ, փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող 10-002-0028-0072 ծածկագրով 180 քմ բնակավայրերի նշանակության, Ձախափնյակի 12-րդ փողոցի N 2 հողամասի նպատակային նշանակությունը էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության՝ կապի գործառնական նշանակությամբ, փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3.Հավանություն տալ Ջերմուկի համայնքում գտնվող «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի զբաղեցրած անշարժ գույքի սպասարկման հողամասին կից 1384,7քմ մակերեսով անտառային նշանակության հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային նշանակությամբ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

4.Դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը՝ հողամասերի նպատակային նշանակությունները փոփոխելու խնդրանքով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			

Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 25-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասին 27-րդ ենթակետին համապատասխան, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին ենթակետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 9-րդ և 12-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հավանություն տալ Ջերմուկի համայնքի սեփականությունը հանդիսացող Շահումյան փողոցի N 7/5/3 հասցեում գտնվող 3765,3 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2. Հավանություն տալ Ջերմուկի համայնքի սեփականությունը հանդիսացող Մյասնիկյան փողոցի N 3/1-3/2/1 հասցեում գտնվող 62,5 քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման փոփոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերում նշված հողամասերի գործառնական նշանակությունները փոխելու վերաբերյալ համաձայնություն ստանալու խնդրանքով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			

Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-....0..... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 26-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի հիման վրա Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Երևանյան խճուղու 1-ին փակուղի N 5 հասցեում գտնվող 49 քմ մակերեսով հողամասը (ծածկագիրը՝ 10-002-0024-0191, նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ կապի) ըստ քաղաքի գլխավոր հատակագծի աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասի օտարման նպատակը՝ բջջային կայան տեղադրելու համար, մեկնարկային գինը՝ 100 000 դրամ, նախատեսված կայանի կառուցման ժամկետը՝ 1 տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			

Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- .....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- 0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 27-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 9/5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԼՃԱԿԸ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի հիման վրա ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականությունը համարվող, Շահումյան փողոցի N 9/5 հասցեում գտնվող, 1,35623 հա մակերեսով արհեստական լճակը (հողամասի նպատակային նշանակությունը՝ ջրային, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0009-0006) մրցույթային եղանակով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով՝

- վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ հանգստի գոտու կազմակերպում

- տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 50 000 դրամ

- վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝ 3 (երեք) տարի

2. Արգելել ջրօգտագործումը արհեստական լճակից:

3. Սահմանել, որ մրցույթում հաղթողը պարտավոր է՝

ա/ ապահովել լճակի ջրային մակերեսի և հարակից տարածքների ամենօրյա սանիտարական մաքրումը,

բ/ պահպանել լճակի և հարակից տարածքների կարգավիճակը որպես հանգստի գոտիներ,

գ/ պահպանել լճակի ջրային մակերեսը և ծավալը՝ վարձակալման պահի դրությամբ,

դ/ սպասարկման ծառայությունների կազմակերպումը և (կամ) ենթավարձակալությամբ տրամադրումը կատարել համայնքի ղեկավարի գրավոր թույլտվությամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի	բացակա		
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7..... դեմ-.....0..... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 28-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԼԱՔԱՀԱՆՔԻ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՄՍԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 46 հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ը» ենթակետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շլաքահանքի փողոցի N 6 և Շլաքահանքի փողոցի N 7 հասցեներում գտնվող, համապատասխանաբար՝ 2,5 հա և 2,4 հա մակերեսներով (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ ընդերքի օգտագործման) հողամասերը առանց մրցույթի, վարձակալության իրավունքով ընդերքօգտագործման իրավունք ունեցող «Ջերմուկի Կարիտաս» ՍՊ ընկերությանը օգտագործման տրամադրելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ հաստատելով հողամասերի՝ վարձակալությամբ օգտագործման տրամադրելու նպատակը՝ հրաբխային խարամի արդյունահանում, ամսեկան վարձավճարի չափը՝ համապատասխանաբար՝ 150 000 և 140 000 դրամ, վարձակալմամբ օգտագործելու ժամկետը՝50 տարի:

2. Հայաստանի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան իրավունք վերապահել Ջերմուկի համայնքի ղեկավարին «Ջերմուկի Կարիտաս» ՍՊ ընկերության հետ կնքելու հողօգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			

Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի	բացակա		
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ապրիլի 2016թ. N 29-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 19-ՐԴ ՇԵՆՔԻ N 18/1 ԵՎ 27-ՐԴ ՇԵՆՔԻ N 9/1 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շահումյան փողոցի 19-րդ շենքի N 18/1 բնակարանը, մակերեսը՝ 26,68 քմ), սոցիալ-տնտեսական կարիքները հոգալու նպատակով համայնքի բնակիչ, այդ սենյակը օգտագործող և տիրապետող Ալմեդա Գրիգորյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

2.համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Շահումյան փողոցի 27-րդ շենքի N 9/1 բնակարանը, մակերեսը՝ 8,02 քմ), սոցիալ-տնտեսական կարիքները հոգալու նպատակով համայնքի բնակիչ, այդ սենյակը օգտագործող և տիրապետող Վահան Հարությունյանին անհատույց սեփականության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			

Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի			
Ստեփանյան Վիգեն Արշակի			

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2016 ապրիլի 28
Ջերմուկ